



**Ընտանեկան բռնության
ենթարկված անձանց
ծառայություն մատուցող
աջակցության կենտրոնների
առջև ծառայած խնդիրներն
ու մարտահրավերները**


Հետազոտություն

Ընտանեկան բռնության ենթարկված անձանց
ծառայություն մատուցող աջակցության կենտրոնների
առջև ծառայած խնդիրներն ու մարտահրավերները

Հետապոստություն

Ընդդեմ կանանց սկստամար բռնության կոալիցիա

Երևան
2022



**Բաց Հասարակության
Հիմնադրամներ
Հայաստան**



**Ընդդեմ կանանց սկստմամբ
բռնության կոալիցիա**
**Coalition to stop violence
against women**

Յետագոտության հեղինակ՝

Չարուհի Յովհաննիսյան

Գրքի ձևավորումը՝

Լուսինե Դավթյանի

Յետագոտությունը պատրաստել է Ընդդեմ կանանց սկստմամբ բռնության կոալիցիան «Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի» ֆինանսական աջակցությամբ: Որևէ հատված օգտագործելու և մեջբերելու պարագայում համապատասխան հղում կատարելը պարտադիր է:

Երախտիքի խոսք

Խորին երախտագիտություն ենք հայտնում «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ին սույն հետազոտությանը աջակցելու համար:

Բովանդակություն

Հապավումներ	7
Հիմնական հասկացություններ և սահմանումներ	8
Ներածություն	10
Հետազոտության նպատակը	13
Հետազոտության մեթոդը	15

Գլուխ 1

ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ	16
---	-----------

- 1.1. Աջակցության կենտրոնների ֆինանսական
հնարավորությունները **19**
- 1.2. Աջակցության կենտրոնների մասնագիտական
հնարավորությունները **22**
- 1.3. Աջակցության կենտրոնների
սյութատեխնիկական հագեցվածությունը **24**

Գլուխ 2

ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ, ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՃԱՆԱՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ	28
---	-----------

- 2.1. Աջակցության կենտրոնների հասանելիությունն
ու ճանաչելիությունը **29**

Գլուխ 3

ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ, ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ	32
3.1. Համագործակցությունը ՀՀ ռադիկալության հետ	33
3.2. Համագործակցությունը պետական այլ կառույցների հետ	39

Գլուխ 4

ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ, ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ	45
---	-----------

Գլուխ 5

ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԸ	55
Ամփոփում	60
Առաջարկություններ	65

Հապավումներ

ԱԿ	Աջակցության կենտրոն
ԸԲ	Ընտանեկան բռնություն
ԸԿԵԻՊԲ	Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին
ՄՍԾ	Միասնական սոցիալական ծառայություն
ԽՀՄ	Խնամակալության և հոգաբարձության մարմին
ԽՀՀ	Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԵՆ	Եվրոպայի խորհուրդ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց

Հիմնական հասկացություններ և սահմանումներ

Կանանց նկատմամբ բռնություն

Մեռով պայմանավորված բռնության բոլոր գործողությունները, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել կանանց ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական վնասների պատճառելուն, ինչպես նաև հասարակական կամ անձնական կյանքում բռնի գործողությունների կատարման սպառնալիքները, հարկադրանքը կամ ազատությունից կամայականորեն զրկելը:

Ընտանեկան բռնություն

Ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության բոլոր գործողությունները, որոնք կատարվում են ընտանիքի կամ ընտանեկան միավորի ներսում՝ նախկին կամ ներկա ամուսինների, զուգընկերների միջև՝ անկախ նրանից, թե արդյոք բռնություն կատարողը բնակվում է կամ բնակվել է տուժողի հետ նույն բնակարանում:

Գեղեցի

Սոցիալական դերեր, վարքագծի տիպեր, գործունեության տեսակներ և հատկանիշներ, որոնք տվյալ հասարակությունը դիտում է որպես պատեհ կանանց և տղամարդկանց համար:

Գենդերային հիմքով (սեռով պայմանավորված) բռնություն կանանց նկատմամբ

Բռնություն, որը կնոջ նկատմամբ դրսևորվում է նրա կին լինելու պատճառով, կամ որը կանանց նկատմամբ դրսևորվում է անհամաչափորեն:

Գենդերային կարծրատիպեր

Կանխակալ պատկերացումներ, որոնց համաձայն՝ տղամարդկանց և կանանց վերագրվում են այնպիսի հատկանիշներ կամ դերեր, որոնք որոշվում և սահմանափակվում են նրանց սեռով:

Գենդերային կարծրատիպերը յուրացվում են մանուկ հասակից, շատ կայուն են, դժվար են փոփոխվում, յուրացվում են նույնիսկ այն խմբերի կողմից, որոնց նկատմամբ ձևավորվել են:

Հայրիշխանություն

Հասարակական կազմավորման ձև, որտեղ տղամարդն է քաղաքական իշխանության հիմնական կրողն ու բարոյական հեղինակությունը: Հայրիշխանությանը բնորոշ է տղամարդկային իշխանության ինստիտուտի և տղամարդկային արտոնությունների առկայությունը, միաժամանակ՝ կանանց ենթակայությունն ու ենթակա կարգավիճակը:

Ստամբուլյան կոնվենցիա

«Եվրոպայի խորհրդի կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա: Կոնվենցիան ստորագրվել է 2011-ին Ստամբուլում, այդ իսկ պատճառով կոչվում է Ստամբուլյան կոնվենցիա:

Ներածություն

Ընտանեկան բռնությունը համաշխարհային կտրվածքով լրջագույն մարտահրավերներից է, որն ավելի սրվում և ակներև է դառնում տարեցտարի առավել հաճախ կրկնվող համաճարակների, պատերազմների և այլ ճգնաժամային իրավիճակների ազդեցությամբ: Ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում ընտանեկան բռնության ենթարկվածների գերակշիռ մեծամասնությունը կանայք են: Հետազոտությունները փաստում են, որ Հայաստանում կանայք առավել հաճախ բռնության ենթարկվում են նախկին և ներկա ամուսինների և գուգրնկերների կողմից, սակայն գուգրնկերոջ կողմից ֆիզիկական կամ սեռական բռնության ենթարկված կանանց 43.3 %-ը բռնության մասին լուր է: Զուգրնկերոջ կողմից ֆիզիկական կամ սեռական բռնության ենթարկված կանանց ընդամենը 12 %-ն է դիմում օգնության որևէ պատասխանատու կառույցի: Ընտանեկան բռնության ենթարկված կանայք պատասխանատու կառույցներին դիմում են այն ժամանակ, երբ արդեն անհնար է հանդուրժել բռնությունը կամ բռնության հետևանքով ստացել են ծանր վնասվածքներ¹:

Այս համատեքստում շատ կարևոր է բռնության ենթարկված անձանց համար աջակցության որակյալ ծառայությունների առկայությունը, ինչպես նաև աջակցություն տրամադրող կառույցների մատչելիությունը, որն արդյունավետորեն կկանխարգելի բռնությունը:

¹ «Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության հետազոտություն, 2021 թ.», <https://armstat.am/am/?nid=82&id=2487&fbclid=IwAR3kWMypZqF9yQlfpOXmIxeck9C0f5VTaENdxYbjpVsWzivFdj9lfdupTt4>

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը², որը Հայաստանն ընդունել է 2017 թվականին, ինչպես նաև «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» ԵԽ կոնվենցիան (Ստամբուլյան կոնվենցիա)³, որը Հայաստանը ստորագրել⁴, բայց մինչ այժմ չի վավերացրել, ապահովում են ծառայությունների և պաշտպանության այն շրջանակը, որը պետք է տրամադրվի ընտանեկան բռնության ենթարկված անձանց:

Ինչպես նշված է Ստամբուլյան կոնվենցիայի 4-րդ՝ «Պաշտպանություն և աջակցություն» գլխում, պետությունը պետք է վարի զոհակենտրոն քաղաքականություն, պաշտպանի բոլոր բռնության ենթարկվածներին հետագա բռնություններից և բռնությունը հաղթահարելուն ուղղված ծառայություններ մատուցի: Մատուցվող ծառայությունները պետք է ուղղված լինեն բռնության ենթարկված անձի կրկնակի զոհականացման բացառմանը, նպատակաուղղված լինեն բռնության ենթարկված կանանց իրավագործմանն ու տնտեսական անկախության ապահովմանը, արտահայտեն խոցելի անձանց, այդ թվում՝ երեխաների հատուկ կարիքները և հասանելի լինեն նրանց համար: Իսկ ծառայությունների տրամադրումը չպետք է պայմանավորված լինի իր բողոքը պնդելու կամ բռնություն գործադրողի դեմ ցուցմունք տալու տուժողի պատրաստակամության հանգամանքից:

Ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության ծառայությունների աշխատանքը կարևորելով՝ Եվրոպայի խորհուրդը 2008 թվականին հրապարակեց «Կանանց նկատմամբ բռնության դեմ պայքար. աջակցության

2 <https://www.arlis.am/documentview.aspx?docID=118672>

3 <https://rm.coe.int/168046246d>

4 <http://www.irtek.am/views/act.aspx?aid=93292>

ծառայությունների նվազագույն չափորոշիչներ»⁵
ձեռնարկը, որի շրջանակում ներկայացվում է, թե ինչպիսի
ծառայություններ պետք է մատուցվեն բռնության
ենթարկված անձանց, ինչ մասնագետների կողմից, և ինչ
նվազագույն չափանիշներ պետք է գործեն ծառայություն
մատուցողների համար: Ավելի ուշ՝ 2015 թվականին, ՄԱԿ-ի
գործակալությունների գործընկերությամբ հրապարակվեց
«Բռնության ենթարկվող կանանց և աղջիկների համար
հիմնական ծառայությունների փաթեթը»⁶:

Այս փաստաթղթերը մարդու իրավունքների միջազգային
չափանիշներին համապատասխան աջակցություն և
ծառայություններ տրամադրելու համար ուղենշային են:

5 [https://www.coe.int/t/dg2/equality/domesticviolencecampaign/Source/EG-VAW-CONF\(2007\)Study%20rev.en.pdf](https://www.coe.int/t/dg2/equality/domesticviolencecampaign/Source/EG-VAW-CONF(2007)Study%20rev.en.pdf)

6 <https://www.unwomen.org/en/digital-library/publications/2015/12/essential-services-package-for-women-and-girls-subject-to-violence>

Հետապոտության նպատակը

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աջակցությամբ 2020 թվականից ի վեր Հայաստանի 10 մարզերից յուրաքանչյուրում բացվել են ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոններ⁷: Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի անդամ «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ն պարբերաբար վերապատրաստում և հետևողականորեն զարգացնում է այդ տարածքային կենտրոնների մասնագետներին, որպեսզի նրանք ունենան բավարար հմտություններ, գիտելիքներ և գենդերային զգայունություն՝ գրագետ աջակցություն տրամադրելու ընտանեկան բռնություն վերապրած կանանց: Այս վերապատրաստումները հիմնված են միջազգային լավագույն փորձի վրա, և ընտանեկան բռնության բոլոր ԱԿ-ները հետևում են նույն մեթոդաբանությանը և ունեն փաստաթղթավորման միասնական ձևաթղթեր, որոնք համաձայնեցված են ԱՍՀՆ-ի հետ:

Այնուամենայնիվ, օրենսդրական և ընթացակարգային բացերը, ինչպես նաև իրավապահ մարմինների կարծրատիպային մոտեցումները հանգեցնում են մի շարք խնդիրների և մարտահրավերների, որոնց բախվում են ծառայություններ մատուցող աջակցության կենտրոններն իրենց ամենօրյա աշխատանքում:

Ընտանեկան բռնության դեմ պայքարի օրենսդրական և ընթացակարգային շրջանակը բարելավելու համար կարևոր է բացահայտել այն գործնական խնդիրները, որոնց

⁷ https://www.mlsa.am/?page_id=19928

հետ առնչվում են մարգային աջակցության կենտրոններն ընտանեկան բռնություն վերապրածների և պետական մարմինների հետ հետևողական աշխատանքում:

Այդ նպատակով դիտարկվել են հետևյալ խնդիրները.

- աջակցության կենտրոնների հնարավորությունները՝ ֆինանսական, մասնագիտական, նյութատեխնիկական,
- աջակցության կենտրոնների հասանելիությունն ու ճանաչելիությունը տվյալ մարզում բնակվողների շրջանում,
- աջակցության կենտրոնների համագործակցությունը պետական կառույցների, այդ թվում իրավապահ մարմինների հետ,
- աջակցության կենտրոնների աշխատանքը խոչընդոտող կամ բարդացնող համակարգային, օրենսդրական կամ ընթացակարգային խնդիրները,
- աջակցության կենտրոնների աշխատանքը խոչընդոտող կարծրատիպերը:

Հետազոտության ընթացքում վերհանվել են նշված խնդիրներն, ու մշակվել առաջարկներ քաղաքականություններ մշակողների համար, ինչպես նաև պետական մարմինների աշխատանքն առավել արդյունավետ կազմակերպելու և հանրային դաշտում ընտանեկան բռնության վերաբերյալ կարծրատիպային մոտեցումները փոփոխելու ուղղությամբ:

Հետազոտության մեթոդը

Հետազոտության նպատակի և խնդիրների արդյունավետ վերհանման համար կիրառվել է որակական մեթոդը.

- իրականացվել են խորքային հարցազրույցներ բոլոր մարզերում գործող աջակցության կենտրոնների անձնակազմերի անդամների հետ,
- իրականացվել են փորձագիտական խորքային հարցազրույցներ՝ աջակցության կենտրոններին վերապատրաստող «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի մասնագետների հետ,
- ուսումնասիրվել են աջակցության կենտրոնների աշխատանքին առնչվող իրավական փաստաթղթերն ու ընթացակարգերը:

Արդյունքում բացահայտվել և ամփոփվել են այն հիմնական խնդիրներն ու մարտահրավերները, որոնց վերլուծությունն ու դրանից բխած առաջարկությունները կծառայեն որպես շահերի պաշտպանության գործիք՝ համապատասխան օրենսդրական նախաձեռնությունների և քաղաքականությունների փոփոխությանն ու բարելավմանը հետամուտ լինելու համար:

Հետազոտության մեջ կոնկրետ օրինակներով ներկայացվել են այն իրավիճակները, որոնք պահանջում են անհապաղ լուծումներ և բնորոշ են ընտանեկան բռնության դեպքերին:

**ԱԶԱԿՅՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ,
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ,
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ**

Համաձայն «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի⁸ բռնությունից տուժած անձանց աջակցությունն իրականացնում է աջակցության կենտրոնը, որը նաև որոշում է կայացնում ընտանիքում բռնության ենթարկվածներին և նրանց խնամքի տակ եղող անձանց իրենց համաձայնությամբ ապաստարանում տեղավորելու մասին: 2020 թվականից Հայաստանի բոլոր մարզերում մասամբ պետության ֆինանսական աջակցությամբ գործում են աջակցության կենտրոններ: Ընտանեկան բռնության ենթարկված անձանց ծառայություններ մատուցողները մարզում գործող հասարակական կազմակերպություններ են, որոնք ունեն կանանց իրավունքների պաշտպանության ասպարեզում գիտելիք և փորձ: Աջակցության կենտրոնին համապատասխան ծառայություններ մատուցելու համար մարզային կազմակերպություններն անցնում են հատուկ ընթացակարգով ընտրություն, ապա ստանում

8 <https://www.arlis.am/documentview.aspx?docID=118672>

Ֆինանսավորում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից: Մակայն հարկ է նշել, որ մարզային ՀԿ-ներին անգնահատելի աջակցություն է ցուցաբերում «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ն, որը ներդնում է իր մասնագիտական, ֆինանսական, նյութատեխնիկական ռեսուրսները մարզային աջակցության կենտրոնների արդյունավետ գործունեության և կայացման գործում: «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ն համակարգում է նաև Հայաստանում գործող և որոշակի պետական աջակցություն ստացող ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար նախատեսված երկու ապաստարանների գործունեությունը:

Ընտանեկան բռնության ենթարկված անձանց ծառայություններ մատուցող կազմակերպությունների, այսինքն՝ ԱԿ-ների և ապաստարանների վերաբերյալ տեղեկություն է տեղադրված ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայքէջում⁹, սակայն խնդրային է այն հանգամանքը, որ տվյալները չեն թարմացվում, և փաստացի որոշ մարզերում նշված կազմակերպություններն այժմ արդեն աջակցության կենտրոնի գործառույթներ չեն իրականացնում: Ուստի այս պահին կայքէջից ճշգրիտ տեղեկություն ստանալ աջակցության կենտրոնների վերաբերյալ հնարավոր չէ, ինչը շտկման կարիք ունի:

Կից ներկայացնում ենք ընտանեկան բռնության ենթարկված անձանց ծառայություններ մատուցող կազմակերպությունների (աջակցության կենտրոններ և ապաստարաններ) ցանկը և թեժ գծերը:

⁹ https://www.mlsa.am/?page_id=19928

	Մարզ/քաղաք	Թեժ գիծ
1	Շիրակ/Գյումրի «Կանանց իրավունքների տուն» ՀԿ	077 570-870
2	Կոտայք/Հրազդան «Կանանց հզորացման ռեսուրս կենտրոն» ՀԿ	077 380-053
3	Վայոց ձոր/Եղեգնաձոր «Դու մենակ չես» կանանց աջակցման ՀԿ	098 886-077
4	Արարատ/Արտաշատ «Դու մենակ չես» կանանց աջակցման ՀԿ	098-88-60-77
5	Արմավիր/Արմավիր «Երիտասարդ ավանգարդ» ՀԿ	093 574-657
6	Արագածոտն/Թալին «Թալին-հույս» ՀԿ	091 482-035
7	Լոռի/Վանաձոր «Ընտանիք առանց բռնության» ՀԿ	098-09-20-94
8	Տավուշ/Իջևան «Երիտասարդ Տավուշ» ՀԿ	094 788-770
9	Գեղարքունիք/Մարտունի, Գավառ «Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ	094 876-505
10	Սյունիք/Գորիս «Սոսե» կանանց հիմնահարցեր ՀԿ	098 848-453
11	Երևան «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ	099-88-78-08

1.1. Աջակցության կենտրոնների ֆինանսական հնարավորությունները

Հայաստանի բոլոր մարզերում գործող աջակցության կենտրոններից յուրաքանչյուրը տարեկան կտրվածքով ծառայություններ է մատուցում ավելի քան 100 շահառուի՝ պետությունից ստանալով 5-5,5 մլն դրամ: Աջակցության կենտրոնների ներկայացուցիչների հավաստմամբ՝ այդ գումարը մասամբ բավարարում է միայն աշխատավարձերին, իսկ տարածքի և կոմունալ վարձավճարների, տրանսպորտային, գույքի ձեռքբերման և այլ ծախսերի համար հասարակական կազմակերպությունները ստիպված են այլ ծրագրեր իրականացնել:

Գրասենյակային գույքի հետ կապված խնդիրներ են առաջանում, տրանսպորտային ծախսերի հետ կապված խնդիր ենք ունենում, տրանսպորտային ծախսերի համար հարկացվող գումարներ չկան:

Լոռու աջակցության կենտրոն

Փաստացի, եթե պետության կողմից տրամադրվող դրամաշնորհը մասամբ բավարարում է միայն աշխատավարձերին, ուստի բնականոն աշխատանքը շարունակելու և որակյալ ծառայություն մատուցելու համար հասարակական կազմակերպությունը պետք է ներգրավի այլ ֆինանսական ռեսուրսներ՝ իրականացնելով այլ ծրագրեր, որոնք կնպաստեն աջակցության կենտրոնի գործունեությանը:

Գումարը, որը տրվում է կենտրոնին, սահմանափակ է, միայն աշխատավարձերին է բավարարում, այն էլ կես-կես դրույքով: Եթե չլինեն ՀԿ-ի այլ ծրագրեր, չենք կարողանա գոյատևել, առավել ևս որակյալ ծառայություն մատուցել:

Շիրակի աջակցության կենտրոն

Բացի այդ՝ այս տարի աջակցության կենտրոնները ֆինանսավորող ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը փոխել է վճարման քաղաքականությունը և աջակցության կենտրոնները ֆինանսավորում է աճողական սկզբունքով: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր ամիս աջակցության կենտրոնը չի ստանում հասանելիք գումարը, և հիմնական ֆինանսական փոխանցումը կատարվում է տարեվերջին՝ աշնան ամիսներին: Թե որտեղից և ինչպես պետք է աջակցության կենտրոնը գումար գեներացնի, պետությանը չի մտահոգում:

Ասում են՝ ուրիշ ծրագրերից փոխառնության տեսքով տեղը դիր, ՀԿ, դու լուծիր, դա քեզ վրա է: Ո՞նց կարող եմ ես ամբողջ տարին լիարժեք չաշխատել, չվճարել աշխատավարձ, բայց տարվա վերջին ուզեմ 2 մլն: Ո՞նց կարող եմ ուրիշ ծրագրի գումարը տալ այս ծրագրին: Ինչպե՞ս բացատրել այլ ծրագրի դոնորին, որ մեկ ուրիշ ծրագրի համար գումար եմ վերցնում: Տարվա վերջին 2 մլն դրամ ստանալ, իսկ ամբողջ տարվա ընթացքում չունենալ պատշաճ ֆինանսավորում, անտրամաբանական է:

Տավուշի աջակցության կենտրոն

Փաստացի, բացի այն հանգամանքից, որ պետության կողմից տրամադրվող ֆինանսական միջոցները սուղ են, դրանք նաև կանոնավոր չեն փոխանցվում, որպեսզի աջակցության կենտրոնը առնվազն աշխատավարձերի վճարման խնդիր չունենա: Այդ մոտեցումը հավելյալ մտահոգություն է առաջացնում հասարակական կազմակերպությունների համար, որոնք ունենում են լրջագույն բարդություններ այլ ֆինանսական միջոցներ ներգրավելու հարցում: Իսկ եթե ՀԿ-ն դեռևս նոր է, դժվարություններ են առաջանում այլ դոնորներից ծրագրեր իրականացնելու համար միջոցներ գեներացնելու հարցում:

Որքան կայացած ես լինում որպես ՀԿ, այնքան քո ռեսուրսները ավելի շարժ հնարավորություններ են տալիս իրականացնելու ծրագիրը, որոնք նպաստում են կենտրոնի որակյալ աշխատանքին:

Արմավիրի աջակցության կենտրոն

Ֆինանսական անկայունությունը խնդիրներ է առաջացնում նաև աջակցության կենտրոնների շահառուների՝ կենտրոն հաճախելու, մասնագետների՝ տարբեր մարմիններ այցելությունների համար հատկացվող տրանսպորտային ծախսերի հարցում:

Երբ անհրաժեշտ է լինում տեղափոխել շահառուին մարզից մարզ կամ սպասարարան, մեզ օգնում է «Կանանց աջակցման կենտրոնը», իսկ երբ մեզ է անհրաժեշտ լինում, մենք ենք հոգում տրանսպորտային ծախսերը կազմակերպության այլ ծրագրերի միջոցով:

Վայոց ձորի աջակցության կենտրոն

Խնդիրներ կան նաև ներհամայնքային տրանսպորտի հարցում, քանի որ հեռավոր գյուղերից մարզկենտրոններ տրանսպորտն աշխատում է շաբաթական երկու անգամ՝ անհարմար ժամերի, և շահառուներին դժվար է լինում գալ աջակցության կենտրոն: Այսպիսով՝ շահառուի հասանելիությունը ԱԿ, որտեղ նա ստանում է խորհրդատվություն և այլ ծառայություններ, որպեսզի կանխարգելի բռնության ցիկլը, չի իրականացվում:

ՀԿ-ն գումար է տալիս սոցաշխատողին, որպեսզի հնարավորինս ամենամաքսելի տարբերակով լուծի տեղափոխման խնդիրը, սակայն գյուղերից շրջկենտրոն տրանսպորտը վատ է, ու դժվար է լուծել, հաճախ տաքսիներով են տեղաշարժվում՝ կազմակերպության այլ ծրագրերի հաշվին:

Կոտայքի աջակցության կենտրոն

Այսպիսով՝ պետության կողմից տրամադրվող ֆինանսական սուղ միջոցները, ֆինանսների տրամադրման անկայունությունն ու անհամաչափությունը, տրանսպորտային, գրասենյակային և այլ ծախսերի համար նախատեսվող միջոցների բացակայությունը հավելյալ բեռ են հասարակական կազմակերպությունների համար, որոնք

հաճախ գտնում են այլ դոնորներ կամ դիմում են «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ին՝ անխափան և արդյունավետ գործունեություն իրականացնելու նպատակով:

1.2. Աջակցության կենտրոնների մասնագիտական հնարավորությունները

Ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության բոլոր կենտրոններն ունեն սոցաշխատողներ և հոգեբաններ, հիմնականում կես դրույքով: Մասնագետները վերապատրաստվել են «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի կողմից և ստանում են շարունակական խորհրդատվություն անհատական գործերի վարման շրջանակում: Սակայն կես դրույքով աշխատանքը միայն ամրագրված է ծրագրով, իրենց հավաստմամբ՝ մասնագետներն աշխատում են անհամեմատ ավելի շատ:

Կես-կես հասարիքներով աշխատակիցներ ունենալը շատ քիչ է, որպեսզի աջակցության կենտրոնը լիարժեք գործի, մենք անում ենք մեր հնարավորություններից առավելագույնը, որպեսզի հնարավորինս լիարժեք ծառայություն մատուցենք, մենք ունենք այդ նվիրումն ու կամքը:

Կուրայքի աջակցության կենտրոն

Ինչպես հարցազրույցների ընթացքում փաստեցին աջակցության կենտրոնների ներկայացուցիչները, մարզերում շատ դժվար է մասնագետներ գտնելը, մասնավորապես առավել բարդ է իրավաբանների խնդիրը, այն էլ նման ցածր աշխատավարձով:

Փաստաբանական ծառայությունների համար գումարները շատ սուղ են: Եթե նույնիսկ մարզում գտնենք լավ մասնագետ, այդ վարձավճարով չենք կարողանա ներգրավել:

Գեղարքունիքի աջակցության կենտրոն

Հաճախ աջակցության կենտրոններն իրականացնում են միայն իրավաբանական խորհրդատվություն, իսկ փաստաբանի անհրաժեշտության դեպքում ուղղորդում են Հանրային պաշտպանի գրասենյակ կամ «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ:

Իրավաբանը կարարում է խորհրդատվություն, ուղղորդում ենք փաստաբանական ծառայության համար հանրային պաշտպանի ինստիտուտ, կամ Կանանց աջակցման կենտրոնին են փոխանցում:

Գյումրու աջակցության կենտրոն

Աջակցության կենտրոնները դժվարանում են նաև սոցիալական աշխատողների ներգրավման հարցում, քանի որ կանանց նկատմամբ բռնության դեպքերով զբաղվող սոցաշխատողները շատ են տարբերվում այլ ոլորտներում սոցիալական աշխատանք կատարողներից, նրանք պետք է անցնեն մասնագիտացված վերապատրաստում և ունենան գեղեցիկագայուն մոտեցում, գիտելիք կանանց իրավունքների ասպարեզում: Նաև շատ դժվար է հայրիշխանական մոտեցումներ ունեցող հասարակությունում իրականացնել ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցություն, քանի որ սոցաշխատողներն արժանանում են բոլորովին այլ վերաբերմունքի:

Ես աշխարել եմ բարեգործական կազմակերպությունում և կարարել սոցիալական աշխատանք: Երբ մուրք ես գործում ընտանիք, գնահատում, թե ինչ աջակցություն պետք է ցուցաբերես, այդպես դու սուրք ես, բարերար ես, լավ մարդ ես: Իսկ մեր դեպքում, երբ կնոջ իրավունք ես պաշտպանում, դու «ընտանիք քանդող ես», բռնարարները և նրա հարազատները մատնացույց են անում:

Տավուշի աջակցության կենտրոն

Բոլոր աջակցության կենտրոններն ունեն հոգեբաններ, որոնք հոգեբանական աջակցություն են տրամադրում կանանց և երեխաներին, սակայն այստեղ ևս առկա են շահերի բախման որոշակի խնդիրներ, քանի որ միևնույն հոգեբանը հաճախ աշխատում է ն՝ մոր, ն՝ երեխայի հետ: Որոշ ԱԿ-ներ էլ ուղղորդում են երեխաներին այլ կառույցներ:

Մենք ունենք մեկ հոգեբան, չունենք մանկական հոգեբան, ինչը գրագետ է, երբեմն ուղղորդում ենք մեկ այլ կառույց, կամ խմբային թերապիաների են երեխաները մասնակցում, բայց անհատական աշխատանք հոգեբանի հետ չի կատարվում՝ շահերի բախումից խուսափելու համար:

Գյումրու աջակցության կենտրոն

Այսպիսով՝ աջակցության կենտրոններն ունեն նաև մասնագետների ներգրավման խնդիր՝ թե՛ ֆինանսական հնարավորությունների, թե՛ մարզում առկա մասնագետների պակասի պատճառով:

1.3. Աջակցության կենտրոնների նյութատեխնիկական հագեցվածությունը

Ընտանեկան բնության ենթարկված անձանց ծառայություններ մատուցող աջակցության կենտրոնների մեծամասնությունը գրասենյակային տարածքը զբաղեցնում է վարձակալությամբ՝ բացառությամբ մի քանի ՀԿ-ների, որոնք ունեն սեփական գրասենյակներ, ինչը թեթևացնում է ԱԿ-ի ֆինանսական բեռը, սեփական տարածքի առկայությունը ապահովում է նաև աջակցության կենտրոնի կայունությունը և նվազեցնում տարածքի փոփոխության ռիսկերը: Ինչպես փաստում են վարձակալությամբ գրասենյակներ զբաղեցնող ԱԿ-ների ներկայացուցիչները, թեև ամեն կերպ փորձում են տարածքները հարմարեցնել ԱԿ-ի պահանջներին, բայց քանի որ այդ տարածքները մշտապես իրենց տնօրինման տակ չեն, դժվար է հիմնովին ձևափոխելը, ինչպես նաև հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար

մատչելիությունն ապահովելը: Որոշ աջակցության կենտրոններ գործում են վարչական շենքերում, որոնք չունեն թեքահարթակներ ու վերելակներ:

Մի քանի ԱԿ-ներ, այնուամենայնիվ, ՀԿ-ին պատկանող տարածքում են գործում, և դա բավականին բարձրացնում է աշխատանքի արդյունավետությունն ու ավելացնում տարածքի հարմարավետության հնարավորությունները:

Տարածքը գնել ենք ֆոնդիայթայթման միջոցով, վերանորոգել ենք ըստ մեր պահանջների ու ծրագրերի, ազարվել ենք վարձակալության ծախսերից և տեղափոխության անցանկալի պարտադրանքից:

Կոտայքի աջակցության կենտրոն

Աջակցության կենտրոններն ունեն նաև գույքային խնդիրներ ու թեն իրենց սուղ միջոցներով փորձել են ձեռք բերել փաստաթղթերի համար ապահով, փակվող պահարաններ և գործել անձնական տվյալների պաշտպանության և գաղտնիության սկզբունքին համապատասխան, միշտ չէ, որ դա հաջողվում է:

Չունենք չհրկիզվող պահարան, հատուկ փակվող պահարան, գույք, դեռևս չենք կարողանում ձեռք բերել, գույքի հետ կապված խնդիրներ ունենք: Գրասենյակը թեքահարթակ չունի, վաճակալվում է քաղաքի կենտրոնում, բայց շենքը չունի հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարություններ:

Լոռու աջակցության կենտրոն

Աջակցության կենտրոնները, մտահոգվելով շահառուներին թիրախավորումից զերծ պահելու խնդրով, փորձում են ամեն կերպ քողարկել իրենց գործունեության բնույթը, քանի որ հասարակությունը դեռևս մատնացույց է անում ընտանեկան բռնության ենթարկված անձանց: Ուստի ԱԿ-ները գործում են հնարավորինս պաշտպանված տարածքներում, իրականացնում բազմարևույթ գործունեություն:

Տարածքը վարձակալել ենք մի շենքում, որտեղ գործում են մանկական զարգացման կենտրոններ, կոսմետիկայի գրասենյակ կա և այլն, կինը կարող է այլ տարրեր հարցերով մտնել այդ տարածք, և միտումնավոր մեր կենտրոնի մուտքին որևէ բան գրված չէ, որպեսզի մտարդիկ չիմանան, թե կինն ուր է գալիս, և չթիրախավորվեն:

Լոռու աջակցության կենտրոն

Աջակցության կենտրոնները փորձում են իրականացնել նաև բազմաբովանդակ ծրագրեր, որպեսզի ԱԿ-ն չընկալվի և չպիտակավորվի իբրև ԸԲ կենտրոն, և այսպիսով շահառուի մուտքը մնա աննկատ:

Մենք գրասենյակների վրա ցուցանակ չունենք, որպեսզի մուտք գործողին չթիրախավորեն, թե ուր է մտնում: Մենք սկսել ենք մեր կազմակերպության աշխատանքները այլ ծրագրերով, տնտեսական աջակցության, տրիկոմիկագործության և այլ հմտությունների դասավանդման ծրագրերով, և մեզ մոտ մշտապես տարրեր խմբերի կանայք և երեխաներ են եկել: Այս պահին ևս զբաղվածության ծրագրեր ունենք, տարեցների և երեխաների համար ժամանցն ապահովող ծրագրեր ենք իրականացնում, ինչը քողարկում է մեր գործունեությունը, որը նաև թիրախավորման հիմք կարող է հանդիսանալ: Այժմ էլ սրեղծել ենք կանանց ակումբ, որին մասնակցում են տարրեր սոցիալական խմբերի կանայք:

Վայոց ձորի աջակցության կենտրոն

Աջակցության կենտրոնները բացի աջակցություն և խորհրդատվություն տրամադրելուց իրականացնում են նաև կանանց հզորացման ծրագրեր: Հզորացումը լինում է երկու տեսակի՝ անձնական հզորացում, որպեսզի բարձրանան բռնության ենթարկվածի իրավագիտակցությունն ու ինքնագնահատականը, և տնտեսական հզորացում, որը բռնության ենթարկված կանանց հնարավորություն է տալիս ձեռք բերելու տնտեսական անկախություն ու կայունություն:

Ամենախոցելիին այն է, որ միայն ծառայություն մատուցելով գրեթե արդյունք չենք ունենա, կինը դարձյալ սրիպված կլինի վերադառնալ բռնարարի մոտ: Եթե մենք այլ ծրագրեր չիրականացնենք կանանց տնտեսական հզորացման և զարգացման ուղղությամբ, և մեր կողքին չլինի Կանանց աջակցման կենտրոնը, մեր գործը 50 %-ով պակաս արդյունք կրա: Որպեսզի կանայք լիարժեք ազատվեն բռնությունից, պետք է իրականացվեն տնտեսական զորեղացման ծրագրեր:

Գեղարքունիքի աջակցության կենտրոն

Խնդրային է նաև ԱԿ-ների անվտանգության ապահովման հարցը: Եզակի կենտրոններ ապահովված են տեսախցիկներով: Անվտանգության ազդարարման համակարգեր, որոնք անմիջականորեն կապված են իրավապահ մարմինների հետ, կան միայն Երևանի: «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ում, ինչը վճարովի ծառայություն է: Մարզերում թեև ոստիկանության բաժիններն ավելի մոտ են ԱԿ-ներին, այնուամենայնիվ, ընտանեկան բռնության խնդիրներով զբաղվող իրավապաշտպան կազմակերպությունների գործունեությունը բավականին դիսկային է, բռնարարները երբեմն փորձում են ներխուժել գրասենյակներ, խափանել կառույցների գործունեությունը:

Բռնարարը կնոջ հետևից մտավ գրասենյակ՝ գոռալով, թե էս ինչ եք անում, ու որևէ պաշտպանություն չկա, ու էդ ոհակը միշտ ունենում ենք:

Տավուշի աջակցության կենտրոն

Այսպիսով՝ աջակցության կենտրոններն ունեն տարածքին և գրասենյակային գույքին առնչվող բազմաթիվ խնդիրներ, որոնք փորձում են լուծել տարբեր ծրագրերի միջոցով, քանի որ պետության տրամադրած դրամական միջոցները որևէ կերպ չեն ծածկում այդ ծախսերը: Բացի տարածքային ու գույքային խնդիրներից՝ ԱԿ-ներն ունեն նաև անվտանգության խնդիրներ: Կենտրոններից շատ քչերն ունեն անվտանգության համակարգեր՝ տեսախցիկներ:

Գլուխ 2

ԱԶԱԿՅՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ, ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՃԱՆԱՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ աջակցության ծառայությունների ԵԽ նվազագույն չափորոշիչների¹⁰ ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցություն տրամադրող կենտրոնները պետք է հիմնված լինեն հետևյալ սկզբունքների վրա.

- կոնֆիդենցիալության,
- անվտանգության ու պաշտպանվածության, ինչպես նաև շահառուների նկատմամբ հարգանքի վրա,
- լինեն մատչելի՝ բոլոր, այդ թվում խոցելի խմբերի համար,
- հասանելի՝ 24/7 թեժ գծի առկայությամբ,
- անվճար,
- կենտրոնացված՝ բազմամասնագիտական անձնակազմի առկայությամբ:

10 [https://www.coe.int/t/dg2/equality/domesticviolencecampaign/Source/EG-VAW-CONF\(2007\)Study%20rev.en.pdf](https://www.coe.int/t/dg2/equality/domesticviolencecampaign/Source/EG-VAW-CONF(2007)Study%20rev.en.pdf)

Աջակցության կենտրոնների հիմնական նպատակն է վերադարձնել կանանց իրենցից խլված ինքնությունները, տրամադրել այնպիսի ծառայություններ, որ բռնություն վերապրած կինը կարողանա ինքնություն որոշումներ կայացնել, ապահովել իր և երեխաների բարեկեցությունն ու բռնությունից զերծ կյանքը:

Այդ նպատակն իրագործելու համար ԱԿ-ները պետք է լինեն իրենց մարզում ճանաչելի, մատչելի և հասանելի:

2.1. Աջակցության կենտրոնների հասանելիությունն ու ճանաչելիությունը

Հայաստանի բոլոր մարզերում գործող աջակցության կենտրոններն ունեն թեժ գծի ծառայություններ, որոնք սպասարկվում են սոցիալական աշխատողների կողմից: Թեժ գծերը հասանելի են 24 ժամ, ինչպես նաև հանգստյան օրերին:

Ինչպես ամրագրված է «Եվրոպայի խորհրդի կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» ԵԽ կոնվենցիայի 24-րդ հոդվածում.

Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ նախատեսելու առանց հանգստյան օրերի, շուրջօրյա ռեժիմով (24/7) գործող օգնության համապետական հեռախոսահամարների ստեղծում, որոնք խորհրդապահության կամ անանունության պատշաճ հիմունքներով զանգահարողներին խորհրդատվություն կտրամադրեն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերի վերաբերյալ¹¹:

11 <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090000168046246d>

Այս մտտեցումը աջակցության կենտրոնները պահպանում են միջազգային չափանիշներին համապատասխան, սակայն ԱԿ-ների հետ պետության կողմից իրականացվող ծրագրի շրջանակում թե՛ գծի ծառայությունն ամրագրված է միայն աշխատանքային օրերին ու ժամերին:

Նախարարության ծրագրով թե՛ գծի ծառայությունը մինչև ժամը 18:00-ն է՝ առանց շաբաթ-կիրակի օրերի: Բայց մենք աշխատում ենք 24/7 ռեժիմով այլ ծրագրերի շնորհիվ: Ամսվա կտրվածքով 15-20 առաջնային զանգ լինում է, իսկ այն շահառուները, որոնք գրանցված են, մշտապես կապի մեջ են ու զանգում են, բոլոր շահառուները շարունակում են կապը պահպանել կենտրոնի հետ:

Սյունիքի աջակցության կենտրոն

Թե՛ գծերի հեռախոսահամարները աջակցության կենտրոնները փորձում են հասանելի դարձնել հանրությանը այցեքարտերի և հասարակական կազմակերպությունների ֆեյսբուքյան էջերի միջոցով: Ինչպես նաև թե՛ գծի հեռախոսահամարը տրամադրվել է մարզային բոլոր կառույցներին՝ ոստիկանությանը, ԱԻՆ-ին, մարզպետարաններին, Միասնական սոցիալական ծառայություններին և այլն:

Թե՛ գծի ծառայությունը թեև ծրագրով պետք է աշխատի մինչև 18:00-ն, բայց մենք չենք անջատում, քանի որ միշտ պետք է հասանելի լինենք: Եղել է՝ գիշերվա 1:30-ին ոստիկանությունն է զանգել, 1:00-ին ԱԻՆ-ն է ահազանգել հրատապ դեպքով: Ամռանը եկել, ծեծել-ջարդել, երեխային ձեռքից վերցրել էր, և հոսահատ փճակում կինը գնացել էր կամրջից ցած ներվելու: Արագ արձագանքեցինք, Երևանից «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ն ևս օգնեց, երեխային վերադարձրին մորը, և այդ կինն այնքան շնորհակալ էր, որ նույնիսկ զանգահարեց և ասաց, որ հիմա հասկանում է, թե ինչ փճակում են բռնության ենթարկվող կանայք, և ինչ կարևոր է մեր տրամադրած աջակցությունը:

Արագածոտնի աջակցության կենտրոն

Թեև աջակցության կենտրոնները հավելյալ միջոցներ ներգրավելով ապահովում են թեժ գծի շուրջօրյա ծառայության հասանելիություն, սակայն նշում են, որ այդ հեռախոսահամարներն այնքան էլ տարածված չեն, և առավել հեռավոր բնակավայրերում կանայք տեղեկացված չեն: Թեժ գծերի հեռախոսահամարները փակցված չեն տարբեր համայնքային կառույցներում, իսկ լրատվամիջոցների հետ աշխատանքը բարդ է և մեծ ֆինանսական ռեսուրսներ է պահանջում:

Այլ ծրագրերի շրջանակներում իրազեկող դասընթացներ և ռադիոհաղորդումներ ենք պատրաստում, որոնց ընթացքում հանրայնացնում ենք նաև մեր թեժ գծի հեռախոսահամարը, որպեսզի կանայք տեղեկացված լինեն, զանգահարեն ու դիմեն մեզ: Այժմ փորձում ենք ծրագրեր գրել, որպեսզի մարզային հեռուստատեսությամբ ևս կարողանանք հանրային իրազեկում իրականացնել:

Շիրակի աջակցության կենտրոն

Այսպիսով՝ թեժ գծերի հեռախոսահամարները շուրջօրյա ռեժիմով աշխատում են միայն ՀԿ-ների այլ ծրագրերից հատկացվող միջոցների շնորհիվ, հեռախոսահամարները հանրայնացվում են նաև այլ ծրագրերով իրականացվող դասընթացների, միջոցառումների և արշավների միջոցով: Պետական կառույցներում տեսանելի վայրերում դրանք փակցված չեն, նույնիսկ ոչ միշտ են տրամադրվում պատկան մարմինների ահազանգողներին:

Գլուխ 3

ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

Ընտանեկան բռնությունը մարդու իրավունքների և հատկապես կանանց իրավունքների այնպիսի տարածվածություն ունեցող խախտում է, որը անհնար է հաղթահարել, եթե չլինի կայուն և արդյունավետ համագործակցություն խնդրով զբաղվող պետական և հասարակական կառույցների միջև:

Որևէ առանձին մարմին կամ ծառայություն չի կարող իրականացնել բոլոր գործառույթները արդյունավետորեն, եթե չլինեն համապատասխան վերապատրաստումներ անցած և միմյանց հետ համագործակցելու պատրաստակամությամբ կառույցներ: Այդ իսկ պատճառով կարևոր է դիտարկել աջակցության կենտրոնների և ընտանեկան բռնության կանխարգելում և պաշտպանություն իրականացնող լիազոր մարմինների համագործակցության որակը:

Ինչպես ամրագրված է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում¹².

12 <https://www.arlis.am/documentview.aspx?docID=118672>

Ընտանեկան բռնության կանխարգելումը և բռնության ենթարկված անձանց պաշտպանությունն իրենց գործառույթների շրջանակներում իրականացնում են սոցիալական հարցերի ոլորտում լիազոր հանրապետական գործադիր մարմինը, ՀՀ ոստիկանությունը, կրթության ոլորտի լիազոր հանրապետական գործադիր մարմինը, առողջապահության ոլորտի լիազոր հանրապետական գործադիր մարմինը, խնամակալության և հոգաբարձության մարմինները, ընտանիքում բռնության ենթարկվածներին աջակցություն ցույց տվող հատուկ կառույցները, այն է՝ աջակցության կենտրոնները և ապաստարանները, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները:

Նշված մարմինները նաև մասնակցում են ընտանեկան բռնության վերաբերյալ հանրության իրազեկմանը, ընտանիքում բռնության ենթարկվածներին սոցիալական և նյութական աջակցություն ցուցաբերելուն ուղղված միջոցառումների իրականացմանը:

Փաստացի այս բոլոր կառույցների համագործակցությունից է կախված ընտանեկան բռնության դեմ պայքարի արդյունավետությունը, ինչն էլ դիտարկել ենք սույն հետազոտության շրջանակում:

3.1. Համագործակցությունը ՀՀ ոստիկանության հետ

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի շրջանակում ընտանեկան բռնության կանխարգելումն ու բռնության ենթարկված անձանց պաշտպանությունն իրականացվում են մասնագիտացված ստորաբաժանման միջոցով: Ստորաբաժանման

աշխատակիցները օրենքի պահանջով պետք է պարբերաբար անցնեն վերապատրաստումներ, քանի որ հենց նրանք են ընտանեկան բռնության դեպքերի առաջնային արձագանքողները: Նրանք ընտանեկան բռնության ենթարկված և հաղորդմամբ ոստիկանություն դիմած անձանց պետք է պարզաբանեն նրանց իրավունքները և ներկայացնեն հասանելի ծառայություններից օգտվելու հնարավորությունները, անհրաժեշտության դեպքում նրանց ուղղորդեն աջակցության կենտրոններ, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում և կարգով որոշում կայացնեն ընտանիքում բռնության ենթարկվածներին և նրանց խնամքի տակ եղող անձանց ապաստարանում տեղավորելու մասին¹³:

Ինչպես նշում են մարզերում գործող ԱԿ-ների ներկայացուցիչները, միշտ չէ, որ ընտանեկան բռնության ենթարկված և ոստիկանություն հաղորդում ներկայացրած անձանց ուղղորդում են պատշաճ աջակցություն ստանալու, իսկ աջակցությունը պետք է լինի ժամանակին և արժանապատիվ, հակառակ դեպքում այն կորցնում է արդյունավետությունը:

Ոստիկանության հետ համագործակցությունը սերտ չէ, մեզ շահատուները այլ ճանապարհով են գտնում, իսկ ոստիկանությունը դիմում է մեզ այն ժամանակ, երբ հոգեբան է պետք, սոցիալական աշխատող է պետք, այսինքն՝ իրենք են գնահատում, թե երբ ուղղորդեն, որ դեպքում: Այնինչ բոլոր դեպքերի վերաբերյալ կենտրոնը պետք է տեղեկացված լինի, ապա մենք զանգահարենք շահատուներին և հասկանանք, թե արդյոք նրանք ցանկանում են սրանսլ աջակցություն, թե ոչ. դա ոստիկանությունը չպետք է որոշի:

Արմավիրի աջակցության կենտրոն

13 «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք, Հոդված 15. Ոստիկանության լիազորություններն ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=118672>

Ուարիկանության բաժանմունք կա, որ չեն ուղարկում մեզ իրենց դիմած դեպքերը, թեև դա օրենքի պահանջն է: Իրենք ուղարկում են ՄՄԾ, ոչ թե տեղի աջակցության կենտրոն: Երբ մենք հարցնում ենք, թե ինչն է պատճառը, արանում ենք պարզաբանում, թե վայ, մի հասր ձեզ նայեք, մի հասր՝ իրենց, իրենք էն մարդիկ չեն, որ դուք իրենց հետ աշխատեք:

Կուրայքի աջակցության կենտրոն

Փաստացի ոստիկանությունը ոչ միշտ է կատարում օրենքի պահանջը և կամայական որոշումներ կայացնելով՝ բռնության ենթարկված ոչ բոլոր կանանց և երեխաներին է ուղղորդում աջակցության կենտրոններ: Ոստիկանության տարբեր ստորաբաժանումներ տարբեր կերպ են ուղղորդում: Կան դեպքեր, որոնք ԱԿ ուղղորդվում են նամակով, ինչը շատ երկար է տևում, և նամակները չեն պարունակում համապատասխան տվյալներ, կան դեպքեր էլ, որոնք ուղղորդվում են ՄՄԾ կամ մարզպետարան: Այսինքն՝ չկա ուղղորդման կայուն մեխանիզմ: Նաև ոստիկանները հաճախ ԱԿ են ուղղորդում բռնություն գործադրողին՝ խիստ մտահոգ լինելով, թե ուր պետք է գնա բռնարարը, եթե կայացվել է անհետաձգելի միջամտության որոշում: Սա լուրջ վտանգ է ԱԿ աշխատակիցների, նաև այցելող կանանց համար:

Ես բազմիցս ասել եմ, որ մենք բռնարարի հետ չենք աշխատում, իսկ օրենքը ասում է, որ բռնարարի հետ պետք է աշխատել, սակայն այդ հարցը մինչ այժմ լուծված չէ, մենք չգիտենք, թե ուր պետք է գնա բռնարարը ռեաբիլիտացիա անցնելու: Բայց ոստիկանները հաճախ նաև արդարացնում են բռնարարին, ասում են՝ ես չեմ, դու ես, եթե պատճառ չլինի, ինքը խփելո՞ւ է, կարծես թե արդարացնում են բռնությունը և շատ ավելի մրսահոգված են բռնարարով:

Սյունիքի աջակցության կենտրոն

Թեև ոստիկանության գործառույթը բռնության ենթարկված անձին պաշտպանելն է, սակայն, ԱԿ-ների հավաստմամբ, ոստիկանները հաճախ փորձում են հաշտեցնել, չնայած

որ այդ գործառույթն իրենց վրա դրված չէ: ԱԿ դիմած ընտանեկան բռնության ենթարկված անձանց շրջանում շատ են կանայք, որոնք բռնության վերաբերյալ հաղորդում ներկայացնելուց հետո հաջորդ օրերին հրավիրվել են ոստիկանություն, և նրանց հաշտեցման առաջարկ է արվել:

Գնում են ոստիկանություն, ինչպես բոլոր տեղերը ոստիկանը ծածկադմիոց է անում, իր մորքորի տղան է, հարևանն է, ոստիկանության նախկին աշխատակից է, ասում են՝ հաշտվեք, վերջացրեք, չեն ուզում ընթացք տալ:

Արագածոտնի աջակցության կենտրոն

Աջակցության կենտրոնների ներկայացուցիչները փաստում են, որ հաճախ ոստիկանության ներկայացուցիչներն առավել կարևորում են ընտանիքի պահպանումը, քան անձի կյանքի և առողջության իրավունքը՝ ասելով, թե «ընտանիք են փրկում»: Սա ցույց է տալիս, որ ոստիկանները դեռ չեն հասկանում և տիրապետում ընտանեկան բռնության առանձնահատկությանը, չեն գիտակցում, որ բռնությունը ցիկլային է և ունի կրկնվող բնույթ:

Կինը ոստիկանություն էր դիմել կոտրվածքներով, աչքի տակ կապրած, իսկ բռնություն գործադրողը ընտանեկան գործով ոստիկանի հետո բարեկամն է: Ամբողջ օրը այդ ոստիկանը զանգահարել էր բռնության ենթարկված կնոջը, ասել էր՝ արի դիմումդ հե՛տք վերցրու, թե չէ ամուսինդ կնստի, այ կփռշմանես, քո երեխայի հայրն է:

Տավուշի աջակցության կենտրոն

ԱԿ ներկայացուցիչների հավաստմամբ՝ ոստիկանները չեն արձագանքում հոգեբանական բռնության դեպքերին, հատկապես երբ այն շարունակական բնույթ ունի:

Ամուսինն ամբողջովին մերկ տանը շրջում է անչափահաս երեխաների առջև, ալկոհոլի ազդեցության տակ տան իրերը կոտրում է, տանն անհաշտություն և աղմուկ կա, բայց դա

չի ուղեկցվում ֆիզիկական բռնությամբ: Ուարիկանները ահազանգին արձագանքում են այսպես. «Ինչ ես անընդհար գանգում, ո՛չ վրադ կապտուկ կա, ո՛չ քերծվածք, մյուս անգամ մեզ չզանգես»:

Արմավիրի աջակցության կենտրոն

Բռնության ենթարկված անձի հետ հաղորդակցության որակը ևս անբավարար է: Մասնավորապես, երբ իրենց գործառույթների շրջանակներում ծանուցում են, թե ինչ իրավական հետևանքներ կարող են լինել «սուտ ցուցմունք» տալու պարագայում, ոստիկանությունում ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածի ծանուցումը կատարվում է հեզմանք, ծաղր և վախ ներշնչող անընդունելի արտահայտություններով:

Մեր շահառուին ուարիկանության բաժնում ասել էին. «Գիրես, չէ՛, եթե հիմա դու էստեղ մի բառ, մի տառ սխալ գրես, քեզ քաջալացնելու ենք, տանենք զգենք կանանց գաղութ, քեզ էստեղ հում-հում ուրեն»: Կինը եկել էր կենտրոն և լաց լինելով պատմում էր:

Արմավիրի աջակցության կենտրոն

Քիչ չեն դեպքերը, երբ հաղորդում ներկայացրած կնոջը ոստիկանները մեղադրում և պիտակավորում են, տալիս են անձնական բնույթի հարցեր, որոնք միտված են բռնարարին արդարացնելուն, այլ կերպ ասած՝ ոստիկանները զոհակենտրոն մոտեցում չեն ցուցաբերում:

Այ որ լեզվիդ չտրայիր, ինքը քեզ չէր խփի:

Արմավիրի աջակցության կենտրոն

Կարո՞ղ ա ինչ-որ մեկին ունես, ուզում ես մարդուդ վրից թոնես, դրա համար սենց բաներ ես անում:

Վայոց ձորի աջակցության կենտրոն

Ըստ ԱԿ-ների՝ հանդիպում են դեպքեր, երբ բռնություն գործադրողի ահազանգով ոստիկանությունը բռնությունից տուժած կնոջը հաշվատման է վերցնում որպես երեխայի նկատմամբ բռնություն գործադրողի:

Մենք դեպք ունեինք, երբ ամուսինը դիմել էր ոստիկանություն՝ մեղադրելով կնոջը, սակայն իրականում բռնության հիմքով ամուսնալուծված էին, և բռնարար ամուսինը փորձում էր այդ մեթոդով ճնշել կնոջը՝ ասելով, որ նա հարվածել է երեխային: Իսկ ոստիկանությունը հաշվատման էր վերցրել երեխայի մորը, միայն բռնարարի ահազանգի հիման վրա:

Շիրակի աջակցության կենտրոն

Այսպիսով՝ ոստիկանության հետ ԱԿ-ների համագործակցությունն ունի բազմաթիվ խնդիրներ: Ոստիկանությունը դեռևս չի իրականացնում պատշաճ ուղղորդում, կամայականորեն են ընտրվում այն դեպքերը, որոնք ուղարկվում են աջակցության կենտրոնին: Երբեմն ոստիկանությունը ամուսնու կողմից նախկինում բռնության ենթարկված կնոջը ևս հաշվատման է վերցնում որպես երեխայի նկատմամբ բռնություն գործադրողի՝ հենվելով բացառապես բռնարարի ահազանգի վրա: Ոստիկանությունը հաճախ իրականացնում է օրենքով իրեն չվերապահված գործառույթներ, այդ թվում հաշտեցնում է, բռնության ենթարկված անձանց նկատմամբ դրսևորում է խտրական վերաբերմունք և արդարացնում բռնություն գործադրողներին:

Սակայն, ինչպես հավաստիացրին աջակցության կենտրոնների ներկայացուցիչները, վերջին երկու տարվա ընթացքում եղել են դրական փոփոխություններ: Եթե ժամանակին կային մարզային ոստիկանական բաժանմունքներ, որոնք ընդհանրապես չէին ցանկանում համագործակցել ԱԿ-ների հետ, այժմ շտրիիվ աջակցության կենտրոնների հետևողական և պրոֆեսիոնալ աշխատանքի այդ խնդիրը լուծվել է:

3.2. Համագործակցությունը պետական այլ կառույցների հետ

Աջակցության կենտրոնների համագործակցությունը պետական կառույցների հետ կարևոր է, քանի որ, կախված այդ համագործակցության որակից, էապես կարող են փոխվել նաև ընտանեկան բռնության ենթարկված անձանց կյանքն ու բարեկեցությունը: Այդ համագործակցության շնորհիվ ընտանեկան բռնության ենթարկված կինը կարող է արագ ստանալ դրամական աջակցություն, վերականգնել առողջությունը, արդարացիորեն կլուծվեն երեխաների մշտական բնակության վայրին առնչվող խնդիրները բռնության միջավայրից դուրս, չեն խախտվի բռնության ենթարկված երեխաների կրթական իրավունքները և այլն: Սույն հետազոտության շրջանակում դիտարկվել են աջակցության կենտրոնների համակարգային համագործակցության պրակտիկաները մարզպետարանների՝ ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների (ԸԿԵԻՊԲ), Միասնական սոցիալական ծառայությունների (ՄՄԾ), կրթական հաստատությունների, խնամակալության և հոգաբարձության մարմինների (ԽՀՄ), Տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) հետ:

Խնամակալության և հոգաբարձության մարմիններ

Համաձայն ԸԲ կանխարգելման օրենսդրության՝ ընտանեկան բռնության կանխարգելման և ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության նպատակով խնամակալության և հոգաբարձության մարմիններն իրենց լիազորությունների շրջանակներում դիմում են դատարան՝ պաշտպանական որոշման համար, ինչպես նաև հաղորդում են ներկայացնում իրավապահ մարմիններին անչափահաս կամ դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձանց նկատմամբ ընտանիքում գործադրվող բռնության կամ դրա իրական սպառնալիքի մասին, կազմակերպում են ընտանիքում բռնության

պատճառով առանց խնամքի մնացած երեխաների և անգործունակ անձանց խնամքը¹⁴:

Ըստ ԱԿ-ների ներկայացուցիչների՝ ԽՀՄ-ներն այդքան էլ լավ չեն համագործակցում իրենց հետ ընտանեկան բռնության գործերով: ԽՀՄ-ները տեղյակ են իրենց համայնքում առկա ընտանիքներում տիրող իրավիճակից, սակայն հաճախ խուսափում են աջակցության կենտրոններ ուղղորդելուց:

Միայն Միսիանում է լավ, Գորիսում շատ վատ է: Գորիսի ինստանակալության մարմինն իր ոլորտում չի աշխատում, դժվար իրավիճակում հայրնված երեխաներին չեն աջակցում: Ասում են՝ ուրիշի ընտանիք չմտնենք, գլուխը ջալլամի պես մեղցնում են ավագի մեջ ու անտեսում:

Սյունիքի աջակցության կենտրոն

ԽՀՄ-ները ևս մարդու՝ բռնությունից դուրս ապրելու իրավունքը ստորադասում են ընտանիքի պահպանմանը՝ հանդես գալով հաշտեցում իրականացնողի կարգավիճակում:

Խնամակալության հանձնաժողովների աշխատանքը միայն հաշտեցման ծիրում է, այլ աշխատանք չեն փնտրում: Համակարգը ընդհանուր թերի է, երբեմն վերցնում են ԱԿ ֆունկցիաներ, հաշտեցման գործընթացի ֆունկցիա են իրականացնում, ինչը ամենևին իրենց գործը չէ: Իսկ մեզ չեն ուղղորդում, չեն համագործակցում:

Կուրայքի աջակցության կենտրոն

14 Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք, Հոդված 18. Խնամակալության և հոգաբարձության մարմինների լիազորությունները ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=118672>

ԽՀՄ-ները խտրական վերաբերմունք են դրսևորում կանանց նկատմամբ, և իրավիճակը փոխվում է միայն այն դեպքում, երբ միջամտում է աջակցության կենտրոնը:

Նրանք շահառուի տեսքին նայելով եզրակացություններ են անում՝ արդյո՞ք նրան տալ երեխային, թե՛ ոչ. մինչև մեր իրավաբանը չի միջամտում, վերաբերմունքը չի փոխվում, եղել է, որ պետք էր այց կազմակերպել, որպեսզի մայրը երեխային տեսակցի, մերժել են. մինչև աջակցման կենտրոնը չի միջամտում, իրավիճակը չի շփոթվում:

Շիրակի աջակցության կենտրոն

ԱԿ-ների հավաստմամբ՝ ԽՀՄ-ները չեն պատկերացնում ընտանեկան և սեռական բռնության ողջ լրջությունը, հաճախ բռնության ենթարկված երեխաներին վերաբերող հարցերը քննարկում են անպատեհ արտահայտություններով:

Սեռական բռնության դեպք էինք ունեցել անչափահաս երեխայի նկատմամբ, և այս դեպքը քննարկվում էր ԽՀՀ-ում, և դեպքը ներկայացնելուց առաջ սասցին, թե մեր վերջին ներկայացվող հարցը 18+ կինո է, ինչը ինձ համար ահավոր բան էր՝ անընդունելի, զարմանալի, մինչև հիմա շոկից դուրս չեմ գալիս: Սեռական բռնության դեպք է տեղի ունեցել անչափահաս երեխայի նկատմամբ, որը սոցիալական ծանր պայմաններում ապրող երեխա է, ծնողներն անընդհար սարերում են, և ինչ-որ մեկն օգրվել էր երեխայի անպաշտպան վիճակից: Փոխարենը, որ իրենք իրենց մեղքի զգացումն ունենան, որ համայնքն իր տեղում չի եղել, և եթե ծնողները կարիքից դրդված երեխայի կողքին չեն եղել, համայնքն աչք է փակել, ինստիտուցիայի հանձնաժողովը իրոնիկ ծաղրանքով է վերաբերվում այդ կարևորագույն հարցին:

Վայոց ձորի աջակցության կենտրոն

Փաստացի ԽՀՄ գործունեությունն առնչվում է բարդ իրավիճակների՝ ընտանեկան և սեռական բռնության ենթարկված մարդկանց և հատկապես կանանց և երեխաների կյանքի որակի բարելավման հարցերին, որոնք,

ըստ աջակցության կենտրոնների ներկայացուցիչների, անտեսվում են: Այդ են վկայում նաև խնամակալության և հոգաբարձության մարմինների վերաբերյալ հետազոտությունները, ինչպես 2017 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի հրապարակած արտահերթ զեկույցը¹⁵, այնպես էլ «Իրավունքի ուժ» ՀԿ-ի 2020 թվականին հրապարակած «Խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով ինստիտուցիոնալ բարեփոխումների վերաբերյալ» հետազոտությունը¹⁶: Այսպիսով՝ ԽՀՄ/ԽՀՀ ներկայացուցիչները չունեն նվազագույն գիտելիքներ ու պատկերացումներ ընտանեկան բռնության և կանանց ու երեխաների վրա դրա ազդեցության վերաբերյալ, թույլ են տալիս էթիկական խախտումներ և ամեննին պատրաստ չեն ԱԿ-ների հետ համագործակցության:

Կրթական հաստատություններ

Համաձայն ԸԲ կանխարգելման օրենսդրության՝ ընտանեկան բռնության կանխարգելման բնագավառում կրթության ոլորտի լիազոր հանրապետական գործադիր մարմինը պետք է ուսուցիչների և դաստիարակների հետ պարբերաբար անցկացնի վերապատրաստումներ՝ ընտանիքում բռնության կանխարգելման բնագավառում նրանց դերի, ընտանիքում բռնության դեպքերի մասին իրավասու մարմիններին հայտնելու կարգի վերաբերյալ¹⁷: Մակայն, ինչպես փաստում են ԱԿ-ների ներկայացուցիչները, դպրոցները շատ զգուշավոր են, նույնիսկ երբ ՀԿ-ները փորձում են իրականացնել իրազեկման արշավներ, հանդիպում են խոչընդոտների:

15 <https://www.ombuds.am/images/files/615b7bff7bdaac165eeb767625c6adfl.pdf>

16 https://hrp.am/wp-content/uploads/2020/09/Research_On_Custody_and_Guardianship_Authorities_HRP-1.pdf

17 Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք, Հոդված 16. Կրթության ոլորտի լիազոր հանրապետական գործադիր մարմնի լիազորություններն ընտանիքում բռնության կանխարգելման բնագավառում, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=118672>

*Թեման շար գգայուն է, դպրոցներում շար դժվար է խոսել
ԸԲ ինդրի մասին: Դպրոցները դեռ փակ են այդ թեմայի
սոցև, մեր իրավաբանը դպրոցներից մեկում հանդիպման
ժամանակ խոսել է ընտանեկան բռնության մասին, շար վար
էին ընդունել: Ասել էին՝ «Յանի դիմողներ կան, բա ամոթ չի»:
Զարմանում են, դժվար, բավականին դանդաղ են փոխվում:*

Սյունիքի աջակցության կենտրոն

Դպրոցների իրազեկվածությունը թույլ է թե՛ ընտանեկան
բռնության դեպքերի բացահայտման և թե՛ ազդարարման ու
իրավասու մարմիններին հայտնելու հարցերում: Երեխաներն
իրենց օրվա մեծ մասն անցկացնում են դպրոցում, և
բռնության դեպքերի վաղ հայտնաբերումն ու պատշաճ
ազդարարումը մեծ ազդեցություն կարող են ունենալ
երեխային արդյունավետ աջակցություն տրամադրելու
գործում: Ընտանեկան բռնության աջակցման կենտրոնների
կոալիցիան նամակով դիմել է կրթության նախարարությանը,
որպեսզի ըստ համապատասխան հրամանի դպրոցական
անձնակազմը ԱԿ մասնագետի կողմից ստանա իրազեկում
ընտանեկան բռնության մասին: Պատասխան նամակում
նշված էր, որ դպրոցները իրազեկված են գենդերային
հավասարության մասին, բայց դա ամենևին բավարար
չէ, քանի որ դպրոցները բացարձակապես որևէ դեպք չեն
ուղղորդում աջակցության կենտրոններին:

*Դպրոցներից մեկում Կոնստանտինը նկատել էր, որ երեխան
ոչ պարզաճ կերպով է գալիս դպրոց, բայց որևէ
նախաձեռնողականություն չէր ցուցաբերել, մինչև
որ մենք զանգեցինք ու հարցրինք երեխայի վիճակի
վերաբերյալ: Նա ասաց, որ վաղուց նկատել է երեխայի
վարքի փոփոխություն, բայց որևէ փոփոխ չի ահազանգել: Ի
տարբերություն դպրոցների՝ ունենք նախադպրոցական
հասարակությունների հետ աշխատանքի դրական փորձ, երբ
քաղաքապետարանի կրթության բաժնի ղեկավարը զանգել
և ասել էր, որ երեխան Կոնստանտինը ծեծված եկել է մանկապարտեզ:*

Արմավիրի աջակցության կենտրոն:

ԱԿ-ները խնդիրներ են ունենում նաև ընտանեկան բռնության հետևանքով մոր հետ մի մարզից մյուսը տեղափոխված երեխաների կրթության իրավունքն իրացնելիս, քանի որ տնօրենները չեն ապահովում գաղտնիությունը, խուսափում են երեխային դպրոց ընդունելուց և պիտակավորում են բռնության ենթարկված կնոջը: Ինչպես փաստում են ԱԿ-ների ներկայացուցիչները, այս խնդիրը բազմիցս բարձրաձայնվել է հանրային ժողովների և պատկան մարմինների հետ հանդիպումների ժամանակ, սակայն առ այսօր պատշաճ լուծում չի ստացել:

Տավուշից մեր մարզ տեղափոխելիս երեխայի դպրոցի հետ ունեցանք խնդիր:

Տնօրենը ընտանեկան բռնությունն այլ կերպ էր որակում, և դա խանգարեց, որ երեխային ընդունի իր դպրոց: Ասում էր՝ մեզ համար ռիսկային է, անմիջապես կսպ էր հաստատել Տավուշի դպրոցի տնօրենի հետ, և ասում էր, որ մայրը երեխային գողացել է, և ամուսնուն չտեղեկացնելու իրավունք ինքը չունի:

Վայոց ձորի աջակցության կենտրոն

Այսպիսով՝ դպրոցները, որոնք օրենքով նախատեսված են որպես ընտանեկան բռնության կանխարգելման բնագավառում կարևոր դերակատարում ունեցող հաստատություններ, դեռևս պատրաստ չեն ԱԿ-ների հետ համագործակցության: Դպրոցի տնօրենները և ուսուցիչները չունեն բավարար գիտելիքներ ընտանեկան բռնության դեպքերի բացահայտման և ազդարարման վերաբերյալ, պատշաճ չեն ապահովում բռնության հետևանքով այլ մարզից իրենց մոտ տեղափոխված երեխաների կրթության իրավունքը, առկա է նաև ընտանեկան բռնության վերաբերյալ մերժողական մոտեցում:

**ԱԶԱԿՅՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ
ԱՇԽԱՏԱՆՔԸ
ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԿԱՄ
ԲԱՐԴԱՅՆՈՂ
ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ,
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ
ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի հիմնական ներպետական իրավական փաստաթուղթը «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքն է, որն ընդունվել է 2017 թվականին, և իրավակիրառ պրակտիկայում արդեն իսկ վերհանվել են բավականաչափ խնդիրներ¹⁸: ԱԿ-ների մասնագետները փաստում են, որ օրենքում բավարար և անհրաժեշտ դրույթներ նախանշված չեն ընտանեկան բռնության կանխարգելման, բռնությունից տուժած անձանց պաշտպանության համար: Պաշտպանական որոշումներից նախազգուշացումն ազդեցություն չունի, իսկ անհետաձգելի միջամտության որոշումը ժամանակավոր է ազդում:

18 <https://www.arlis.am/documentview.aspx?docID=118672>

Նախագգոռուշացումը որևէ ազդեցություն չունի: Անհետաձգելի միջամտության որոշումը ևս ժամանակավոր է, հետո էլի բռնությունը շարունակվում է: Նույնիսկ ամուսնալուծված վիճակում ամուսինը գնում և սպանում է կնոջը, այս տարի երկու դեպք է գրանցվել, այսինքն՝ օրենքը բավարար պաշտպանություն չի տալիս կանանց:

Գեղարքունիքի աջակցության կենտրոն

Կանանց իրավունքներով զբաղվող կազմակերպությունները բազմիցս բարձրաձայնել և հրապարակումներում նշել են¹⁹ ընտանեկան բռնության վերաբերյալ պատժիչ միջոցների ամրագրման անհրաժեշտության մասին, որը կարող է նաև կանխել ԸԲ դեպքերի շարունակականությունը: Սակայն, հայաստանյան օրենսդրության համաձայն, ընտանեկան բռնությունը քրեականացված չէ: ՀՀ քրեական նոր օրենսգրքում, որը ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ից²⁰, դարձյալ շրջանցվել է ընտանեկան բռնության քրեականացումը, սակայն աջակցության կենտրոնները կարծում են, որ ԸԲ-ն որպես քրեական հանցակազմ պետք է տեղ գտնի ՀՀ քրեական օրենսգրքում:

Կատարյալ անպարժելիություն է, բռնարարը մինչև կնոջը չսպանի, իր հանդեպ քրեական հետապնդում չի իրականացվի, դա մեծ ողբերգություն է, երբ ուտիկանը կանգնում և ասում է, որ որևէ այլ միջոց չի կարող կիրառել, բոլորը սպառվել են, մեր օենքը չի պաշտպանում կնոջը:

Կոտայքի աջակցության կենտրոն

Բոլորովին վերջերս դեպք ենք ունեցել, երբ բռնարարը բազմիցս խախրել է բոլոր պաշտպանական որոշումները, և ուտիկանությունը որևէ լծակ չունեք անձին պարասիանսարվության ենթարկելու: Ի վերջո զենքով

19 https://coalitionagainstviolence.org/wp-content/uploads/2020/11/DOMESTIC-VIOLENCE_ARM_30_06.2020-1.pdf

20 <https://www.arlis.am/documentView.aspx?docid=153080>

մահափորձ է արել, նրան կալանավորել են, ու երբ դուրս գա, որևէ պաշտպանություն չկա այդ կնոջը: Ենթադրենք՝ մարդը էսքան անգամ խախտել է որոշումը, այլ տիպի պատիժներ պետք է նախատեսված լինեն, պետք է քրեականացնել ընտանեկան բռնությունը:

Սյունիքի աջակցության կենտրոն

ԱԿ-ները հաճախ արձանագրում են նաև որոշումների կիրարկմանն առնչվող խնդիրներ, հատկապես գյուղական վայրերում, որտեղ կանայք ապրում են ամուսինների ծնողների հետ, և մի քանի սերունդ ապրում է միևնույն տանը:

Պարկերացրե՛ք՝ գյուղական վայր է, ուտիկանն ամուսնուն անհերքաձգելի միջամտության որոշում է փվել, նա 20 օր պետք է այդ տանը չապրի, արդյո՞ք սկեսորը կհանդուրժի, որ իր տղան այդ տանը չլինի, իսկ հարսը շարունակի ապրել այդտեղ:

Գեղարքունիքի աջակցման կենտրոն

Թեև ԸԲ կանխարգելման օրենսդրությունը ուստիկանությանն օժտել է ընտանիք մուտք գործելու և բռնության ենթարկված անձանց պաշտպանելու լիազորությամբ, բայց ԱԿ-ների ներկայացուցիչների պնդմամբ այդ լիազորությունները քիչ են, հատկապես երեխաներին պաշտպանելու տեսանկյունից: Մասնավորապես քիչ չեն դեպքերը, երբ կանայք կյանքին և առողջությանը սպառնացող վտանգի պարագայում բռնարարի բնակարանից հապճեպ դուրս են գալիս, սակայն երեխաները մնում են բռնարար հոր մոտ: Նման դեպքերում ուստիկանությունը որևէ կերպ չի միջամտում, թեև երեխաները մնում են բռնարար միջավայրում, և խախտվում է մոր՝ երեխաների հետ շփվելու իրավունքը:

Ուտիկանները լուրջ ուշադրություն չեն դարձնում. երեխան հայրիկի մոտ է, ուրեմն այլ քննարկման հարց չկա, բայց նույնիսկ հաշվի չեն առնում՝ հայրը հարբեցող է, թմրանյութ օգտագործող է, հոգեկան առողջության խնդիր ունի,

միննույնն է, երեխաներին չենք կարողանում վերցնել, և ուսրիկաններն ասում են, որ մենք որևէ իրավասություն չունենք երեխաներին վերցնելու և հանձնելու մորը, դիմեք դատարան: Իսկ դատական նիստերը ձգձգվում են, որևէ հրատարակություն չկա, և չեն մտահոգվում, որ բացի մորից ուրնահարվում են նաև երեխաների իրավունքները:

Լոռու մարզի աջակցման կենտրոն

ԸԲ կանխարգելման օրենսդրությունը չի դիտարկում երեխային որպես բռնության ենթարկված անձի, ով անմիջականորեն ականատես է եղել բռնության կիրառմանը և կրել է այդ բռնության բացասական հետևանքները: Ֆիզիկական կամ սեռական բռնությանն ականատես լինելու կամ հոգեբանական հարկադրանքի անմիջական ազդեցությունը կրելու հետևանքով երեխան, տարիքային առանձնահատկություններով պայմանավորված, հայտնվում է խիստ խոցելի, հոգեբանորեն ծանր վիճակում: Մակայն երեխան՝ որպես բռնությունից տուժած անձ, չի ստանում իրավական պաշտպանություն և գործնականում հաճախ մնում է բռնարարի անմիջական ազդեցության տակ: Նման պայմաններում անհրաժեշտ է բռնության հարաբերություններին ականատես կամ բռնության ազդեցությունն այլ կերպ կրած երեխայի իրավական պաշտպանվածությունը հավասարեցնել անմիջականորեն բռնության ենթարկված անձանց կարգավիճակին օրենքով սահմանված նույն երաշխիքների տրամադրմամբ:

Մեր երկրում երեխաներն ընդհանրապես պաշտպանված չեն, այսքան երեխա՝ նյարդային խնդիրներով, գիշերամիզությանը, խոսքի բարդ խանգարումներով, ես չեմ տեսել, կանանց էլի կարողանում ենք փրկել, իսկ երեխաների հարցը լուծված չէ:

Տավուշի աջակցության կենտրոն

Եվ մինչ ոստիկանության ուշադրությունից դուրս են մնում բռնության միջավայրում ապրող երեխաները,

ուշադրության կենտրոնում բռնություն գործադրողներն են, որոնց, ԸԲ կանխարգելման օրենսդրության համաձայն, պաշտպանական միջոց կիրառելուն զուգահեռ պետք է առաջարկվի ռեաբիլիտացիոն ծրագիր: Բռնություն գործադրող անձանց ռեաբիլիտացիան, օրենքի համաձայն, պետք է իրականացնեն աջակցության կենտրոնները: Ավելին՝ նույնիսկ գոյություն ունի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի «Ընտանիքում բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիայի ծրագիրը և կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 119-Ն հրամանը²¹, որով սահմանվում է, որ աջակցության կենտրոնը պաշտպանական միջոցներ կիրառելու մասին որոշումների պատճենները ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցում է ընտանիքում բռնություն գործադրած անձին ծրագրով ռեաբիլիտացիա անցնելու անհրաժեշտության մասին:

Օրենքը սահմանում է, որ բռնության դեպքերն ուղարկվում են աջակցության կենտրոն, որ կենտրոնը աշխարհի և բռնարարի, և՛ զոհի հետ, բայց մենք սոցապի հետ պայմանագիրը կնքում ենք բռնությունից տուժած անձանց ծառայություն մատուցելու շրջանակում: Չգիտես ինչու, օրենքով այդ ֆունկցիան դրված է աջակցության կենտրոնի վրա, որը չի համապատասխանում միջազգային չափանիշներին ու թեև չի էլ իրականացվում, բայց չեն փոխել մինչ այժմ:

Կուրայքի աջակցության կենտրոն

ԸԲ օրենքի շրջանակում ԱԿ-ները պետք է իրականացնեն նաև ընտանեկան բռնության ենթարկված և բռնություն գործադրած անձանց հաշտեցում: Համաձայն «Ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց միջև հաշտեցման կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին»

21 <https://www.mlisa.am/wp-content/uploads/2019/02/hraman-r.pdf>

N 120-ն հրամանի²² ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց հաշտեցումն իրականացվում է ընտանիքում բռնություն գործադրած կամ ընտանիքում բռնության ենթարկված անձի դիմումով, որը ներկայացվում է օրենքով սահմանված աջակցության կենտրոն:

Ի տարբերություն ընտանիքում բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիայի՝ հաշտեցման վերաբերյալ դրույթը ամրագրված է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և աջակցության կենտրոնների միջև կնքվող պայմանագրում, սակայն, ինչպես փաստում են ԱԿ-ների ներկայացուցիչները, իրենք հաշտեցում չեն կատարում, քանի որ թե՛ միջազգային իրավունքով, թե՛ իրենց փորձով վստահ են, որ օրենքում հաշտեցման ընթացակարգի սահմանումը գործնականում խոչընդոտում է, որ բռնության ենթարկված անձինք հասնեն արդյունավետ իրավական պաշտպանության և խախտված իրավունքի վերականգնման: Հաշտեցման գործընթացին պետության որևէ միջամտությունը պետք է բացառվի, քանի որ այն հակադրվում է ընտանեկան բռնության դեպքերի բարձր հանրային վտանգավորության, տուժողի բողոքից անկախ քրեորեն հետապնդելի լինելու և համաչափ, արդարացի ներգործության միջոցներ պահանջելու սահմանված ուղենիշներին: Միայն բռնության ենթարկված անձը կարող է որոշել՝ ուզում է հաշտվել բռնարարի հետ, թե ոչ, և որևէ պետական կամ ոչ պետական կառույց իրավունք չունի միջամտելու: Ընտանեկան բռնության պարագայում պետության քաղաքականությունը պետք է ուղղված լինի ԸԲ դեպքերը կանխարգելելուն, բռնության շարունակականությունը բացառելուն և բռնության ենթարկված անձանց աջակցություն տրամադրելուն, ոչ թե հանուն ընտանիք ինստիտուտի պահպանման թույլ տալու, որ շարունակվեն անհավասար հարաբերությունները՝

22 <https://www.mlsa.am/wp-content/uploads/2019/02/hraman-h.pdf>

ուղեկցվելով կանանց իրավունքների ոտնահարումներով:

Ըստ մեր պայմանագրի՝ հաշվեցումը պահել են, և պայմանագիրը կնքելիս ես ընդդիմացա, բայց չհանեցին: Մենք թեժ վեճեր ունեցանք նախարարության հետ, բայց այս մասով իրավակարգավորումները թերի են: Ամեն դեպքում նախարարությանը հաշվետվություն գրելիս գրում ենք՝ հաշվեցում չենք արել: Սակայն ունեցել ենք դեպք, որ դատահազր ուտրիկանությանը հարցում է ուղարկել, թե ինչու աջակցման կենտրոնը կոնկրետ դեպքով հաշվեցում չի իրականացրել, բայց մենք դա անել չենք կարող, թեև օրենքով և պայմանագրով մեզ վրա է դրված այդ ֆունկցիան:

Կուրայքի աջակցության կենտրոն

Բացի ԸԲ կանխարգելման օրենսդրության մեջ առկա խնդիրներից ու բացերից՝ ԱԿ-ները լրջագույն խոչընդոտների հանդիպեցին 2021 թվականի հոկտեմբերի 29-ին ուժի մեջ մտած «Պետական տուրքի մասին» օրենքում կատարված լրացումների ու փոփոխությունների հետևանքով²³, որոնցով զգալիորեն բարձրացավ պետական տուրքի նվազագույն շեմը (1500 դրամից դարձել է 6000 դրամ, ոչ դրամական պահանջներով հայցադիմումների համար նախատեսված 4000 դրամ պետական տուրքը՝ 20.000 դրամ) դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, գործում են նաև առկա լուսանկարների, ձայնագրությունների, տեսագրությունների և դրանց էլեկտրոնային կրիչների բնօրինակից պատճենահանված կրիչ տալու համար նախատեսված պետական տուրքի դրույքաչափերը:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանն իր «Դատարան դիմելու համար պետական տուրքի դրույքաչափերի մինչև 10 անգամ բարձրացման վտանգները դատական

23 <https://www.irtek.am/views/act.aspx?aid=154161>

պաշտպանության սահմանադրական իրավունքի համար» արտահերթ հրապարակային զեկույցում մտահոգիչ է համարել սահմանված նոր դրույքաչափերը, որոնք ստեղծում են մարդու խախտված իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու խոչընդոտներ և հանգեցնում են դատարանի մատչելիության անհիմն սահմանափակումների²⁴:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանվում են ՀՀ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատման հիմքերը, որոնց համաձայն՝ ԸԲ կանխարգելման օրենսդրությամբ նախատեսված պաշտպանական որոշումների, ինչպես նաև ալիմենտային պարտավորությունների վերաբերյալ հայցերով ընտանեկան բռնության ենթարկված անձ հանդիսացող հայցվորները ազատվում են պետական տուրքի վճարումից: Միաժամանակ, սակայն, ընտանեկան բռնության ենթարկված անձ հանդիսացող հայցվորներն ազատված չեն պետական տուրքի վճարումից ամուսնալուծության, ինչպես նաև երեխայի բնակության վայրի որոշման, երեխայի հետ տեսակցության և շփման կարգ սահմանելու, երեխային ծնողին վերադարձնելու վերաբերյալ հայցերով, և քրեական հայցերի՝ օրենսդրական վերջին փոփոխությունների հետևանքով ընտանեկան բռնության ենթարկված անձ հանդիսացող հայցվորները պարտավորվում են նշված յուրաքանչյուր հայցի համար վճարել 20.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար: Աջակցության կենտրոնների ներկայացուցիչների հավաստմամբ՝ դա հսկայական խոչընդոտ է առաջացնում, քանի որ իրենց շահառուները վճարունակ չեն, իսկ ԱԿ-ները որևէ դրամաշնորհի շրջանակում չեն կարողանում ձևակերպել պետական տուրքի վճարը: Երբեմն դիմում են «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ին պետտուրքի գումարը փոխանցելու խնդրանքով, և որոշ դեպքերում գումարը փոխանցվում է, բայց քանի որ այդ

24 <https://ombuds.am/am/site/ViewNews/2087>

ծավալի միջոցներ չկան, կանայք հրաժարվում են դատարան դիմելու մտադրությունից: Արդյունքում խախտվում է իրավունքի պաշտպանության հնարավորությունը, ինչը հանգեցնում է դատարանի մատչելիության սահմանափակումների:

Մեր շահառուներից շատերն են նման խնդրի առջև կանգնել, ոմանք դատարան դիմելու համար գրավադրել են իրենց միակ սեփականություն հանդիսացող ոսկեդեղեր, ոմանք էլ՝ հրաժարվել դատարան դիմելու մտքից: Օրինակ՝ մի կին, որը բնակվում է քաղաքային համայնքում, աշխատում է, ունի երեխաներ և ցանկանում էր դիմել դատարան՝ ամուսնալուծության և ալիմենտի բռնագանձման հայցերով, մինչ այժմ չի կարողացել դիմել՝ ֆինանսական խնդիրներից ելնելով: Արդյունքում ամուսինը պարբերաբար վերահսկողություն է հաստատում կնոջ վրա՝ շեշտելով, որ կինը իր սեփականությունն է, քանի դեռ ամուսնալուծված չեն:

Շիրակի աջակցության կենտրոն

Ամուսնալուծության, երեխայի տեսակցության և երեխայի մշտական բնակության վայրը սահմանելու վերաբերյալ դատարան դիմելու հնարավորությունը ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար պետք է բաց լինի: Ես քանի անգամ «Կանանց աջակցման կենտրոնին» եմ դիմել, նրանք վճարել են պետությունքի 20 հազար դրամը, բայց ինչո՞ւ, ՀԿ-ն այդքան միջոց չունի:

Տավուշի աջակցության կենտրոն

Այսպիսով՝ ԱԿ-ների աշխատանքը խոչընդոտող և բարդացնող համակարգային, օրենսդրական կամ ընթացակարգային խնդիրները շատ են՝ սկսած ԸԲ կանխարգելման օրենսդրության անկատարությունից, որը բավարար պաշտպանություն չի տրամադրում ընտանեկան բռնության ենթարկված անձանց, բացի այդ՝ պարունակում է այնպիսի դրույթներ, որոնք հակասում են միջազգային իրավունքին ու բռնության ենթարկված անձանց

հետ աշխատանքի համար սահմանված միջազգային
չափորոշիչներին: ԸԲ օրենքի շրջանակում անտեսվում են
նաև բռնության միջավայրում ապրող այն երեխաների
իրավունքները, որոնք չեն ստանում բռնությունից տուժած
անձանց համար նախատեսված աջակցություն: Նաև
օրենսդրական փոփոխություններ նախաձեռնելիս հաշվի չեն
առնվում բռնությունից տուժած անձանց առանձնահատուկ
կարգավիճակով պայմանավորված իրավունքի իրացման
խոչընդոտները: Մասնավորապես «Պետական տուրքի
մասին» ՀՀ օրենքում կատարված լրացումների ու
փոփոխությունների հետևանքով ընտանեկան բռնության
ենթարկված անձ հանդիսացող հայցվորներն ազատված
չեն պետական տուրքի վճարումից, ինչպես նաև արգելք
է դրվում ընտանեկան բռնության ենթարկված անձանց
արդարադատության հասանելիության վրա:

**ԱԶԱԿՅՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ
ԱՇԽԱՏԱՆՔԸ
ԽՈՉԸՆԴՈՏՈՂ
ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԸ**

Կանանց և տղամարդկանց միջև հավասարության վերաբերյալ խտրական պատկերացումները դեռևս արդիական են մեր հասարակության մեջ: Գենդերային անհավասարության պահպանմանն ու ամրապնդմանը նպաստում են կարծրատիպերը, որոնք կատարում են գենդերային անհավասարության արդարացման գործառույթ, միաժամանակ բարդացնում են այն կառույցների աշխատանքը, որոնց գործունեությունն ուղղված է անհավասարության և անարդարության վերացմանը: ԱԿ-ների գործունեությունն ուղղված է հենց ընտանեկան հարաբերություններում իշխանության և ուժի անհավասար բաշխման հետևանքով առաջացած բռնությունից տուժած անձանց իրավունքների վերականգնմանը: Հաճախ այդ կարևոր աշխատանքի խոչընդոտ է լինում հասարակության մեջ առկա կարծրատիպային վերաբերմունքը ընտանեկան բռնության վերաբերյալ: Ինչպես նշում են աջակցության կենտրոնների ներկայացուցիչները, հաճախ հանդիպել են չափազանց մերժողական ու կոշտ վերաբերմունքի, պիտակավորվել որպես «ընտանիք քանդողներ», «կանանց երես տվողներ» ու «կանանց բերանը լեզու դնողներ»:

Ի սկզբանե բոլորը մեզ մեղադրում էին, թե քանդում ենք ընտանիքները, միայն կանանց ենք պաշտպանում, բայց

երբ տեսան աշխարանքի բնույթն ու որակը, փոխվեց վերաբերմունքը: Մակայն փարբեր կառույցներում հանդիպումների ժամանակ նկատվում է այդ կարծրարիպային մոտեցումը:

Արարարի աջակցության կենտրոն

Հատկանշանական է, որ ԱԿ-ներից շատերը կարծրատիպային մոտեցումների և արտահայտությունների են հանդիպել մարզպետարաններում, երբ մասնակցել են ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի աշխատակիցների հետ հանդիպումներին:

Մարզպետարանի՝ ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետի հետ էինք հանդիպում, ասացի՝ մենք այդքան բան ենք անում, ինչն էլ մեր մասին չեք խոսում, չեք համագործակցում, ասաց՝ գաղտնի բան ասեմ, համայնքապետարանում աշխատողները մերածում են, որ դուք ընտանիքներ քայքայողներ եք, և չեն ցանկանում ձեզ հետ սերտ համագործակցել:

Մյունիքի աջակցության կենտրոն

Հայաստանի բոլոր մարզերում մարզպետարաններն ունեն ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժիններ, որոնք ՀՀ տարածքային կառավարման և աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարների համատեղ հրամանով²⁵ իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում պետք է մշակեն և իրականացնեն ընտանիքների, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված ծրագրեր, ուսումնասիրեն մարզում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հիմնահարցերը, մշակեն դրանց լուծմանն ուղղված ծրագրեր, ինչպես նաև ձեռնարկեն երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության անհրաժեշտ միջոցներ: Այդ

25 <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=102686>

տեսանկյունից մարգալետարանների ԸԿԵԻՊԲ-երի և ԸԲ ենթարկված անձանց աջակցության կենտրոնների գործունեության շրջանակը փոխհատվող է, և որքան սերտ լինի նրանց համագործակցությունը, այնքան արդյունավետ կլինի պայքարը ընտանեկան բռնության դեմ: Սակայն, աջակցության կենտրոնների հավաստմամբ, մարգալետարանների համապատասխան բաժինները ոչ միայն լիարժեք չեն համագործակցում իրենց հետ, այլև կարծրատիպերով առաջնորդվողներ են:

Մարգալետարանում գենդերային հարցերով հանձնաժողովի ժամանակ խոսվեց իրավահավասարության մասին, կանանցից մեկը, որը նաև ինամակալության հանձնաժողովի անդամ է, դեմ արտահայտվեց ընտանեկան բռնության դեմ պայքարին, ասաց. «Ես դեմ եմ էդ ընտանեկան բռնության դեպքերին, ճիշտ է, դուք շատ լավ ներկայացնում եք ձեր ծրագրերը, ասում եք, որ իրականացնում եք նաև տնտեսական հզորացման ծրագրեր, սակայն ես մտում եմ իմ կարծիքին, որ մեր մշակույթն էնպիսին է, որ մենք միշտ պետք է լինենք հեղ ու խոնարհ, իսկ տղամարդիկ պետք է լինեն որոշում կայացնողները, և ինձ էլ դուր է գալիս, որ վերջին խոսքն ամուսինս է ասում, մի հար էլ ձեռքը խփում սեղանին: Շատ է եղել, որ ես իմացել եմ նման դեպքեր, բայց ասել եմ, որ դա նորմալ է, քո ամուսինն է, պետք է մի հար էլ խփի, դրա համար չպետք է դիմես ուսրիկանություն»:

Ես հեղոն նայում էի իրենց համայնքի փվյալներին, մենք որևէ դեպք չենք ունեցել այնպեղից:

Վայոց ձորի աջակցության կենտրոն

Կարծրատիպերով են առաջնորդվում նաև Միասնական սոցիալական ծառայությունների ներկայացուցիչները: Աջակցության կենտրոնների հավաստմամբ՝ նրանք համայնքներում շփման լայն շրջանակ ունեն, ծառայությունն ունի մարգային ենթակայության սոցիալական աջակցության 38 գործակալություն, համայնքային ենթակայության

սոցիալական աջակցության 17 բաժին, որոնք իրականացնում են կենսաթոշակների, նպաստների և սոցիալական ապահովության ծրագրերով նախատեսված այլ դրամական վճարների նշանակում և տրամադրում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց սոցիալական կարիքների գնահատում և բավարարում: ՄՄԾ-ների աշխատողները տեղյակ են բոլոր խնդրահարույց ընտանիքներից և կարող են ուղղորդել աջակցման կենտրոններ, սակայն խուսափում են: Բայցի այդ՝ ՄՄԾ նիստի ընթացքում քննարկում են կանանց անձնական կյանքը՝ դատելով նրանց արտաքին տեսքից, կամ խորհուրդներ տալիս շահառուներին՝ միանալ բոնարար ամուսնու հետ:

Կնոջ անձնական կյանքն են քննարկում, ասում՝ սիրած ունի, իրեն պետք չի նպաստ փող, բայց փաստացի կինը կարիքի մեջ է, ուղղակի ասելու ենք ներքինում են առաջնորդվում, կամ ասում են՝ նրա վրայից չի երևում, որ բռնության է ենթարկվում, դեռ ինքը հասարակ բռնության կենթարկի: Եթե կինը ինքնավար է, որևէ մարմին չի ընդունի, որ բռնության ենթարկված է: Մի դեպքով էլ ՄՄԾ-ն պարծենում էր, որ աղջկան ասում է՝ «այ՛ աղջիկ ջան, միացի՛ր, ինչո՛ւ չես միանում»: Ասացի՛ շատ սիսալ եք անում, դա կնոջ որոշումն է, եթե միացավ՝ ձեր խորհրդով, և էլի բռնություն եղավ, կյանքի և առողջության համար վրանգ առաջացավ, ձեզ մեղավոր չե՛ք զգալու:

Տավուշի աջակցության կենտրոն

Կարծրատիպային մոտեցումները կենսունակ են նաև դատական համակարգում: Աջակցության կենտրոնների հավաստմամբ՝ ակնհայտ խտրական և կարծրատիպային վերաբերմունքի են արժանանում իրենց ներկայացուցիչները՝ նաև դատավորների կողմից, որոնց զգալի մասը դեռևս չունի բավարար գիտելիքներ ընտանեկան բռնության վերաբերյալ:

Մի անգամ ամուսնալուծության համար մեր շահառուի հետ դարարան էի գնացել, դարավորն ասաց՝ դուք ո՞վ եք, ասացի՝ աջակցման կենտրոնի ներկայացուցիչը, հենց

*ասացի աջակցման կենտրոն, այնպես մոայլվեց, ասաց.
«Էս դուք եք անում էլի, որ ամուսնավուծվում են»: Իսկ կինն
ինքնասպանության փորձ էր կատարել, և դատավորը դեռ
մեզ ասում էր՝ դուք եք համոզել, որ կինը ամուսնավուծվի:*

Տավուշի աջակցության կենտրոն

Այսպիսով՝ գենդերային կարծրատիպերի վնասակար ազդեցությունը դեռևս առկա է ոչ միայն հասարակության տարբեր շերտերում, այլև այն պետական կառույցներում, ինչպիսիք են մարզպետարանների ԸԿԵԻՊԲ-ները, որոնք լիազորված են պայքար մղելու հանուն կանանց և տղամարդկանց հավասարության: ՄՄԾ-ները ևս առաջնորդվում են կարծրատիպերով և ԸԲ դեպքերի վերաբերյալ ուղղորդումներ չեն կատարում ԱԿ-ներ, ինչպես նաև չեն ցանկանում աջակցություն տրամադրել այն կանանց, որոնք տուժել են ԸԲ-ի հետևանքով, սակայն արտաքին տեսքով չեն համապատասխանում իրենց պատկերացմամբ բռնության ենթարկված կնոջ կերպարին: Կարծրատիպային մոտեցում ունեն աջակցություն տրամադրող կենտրոնների աշխատանքի նկատմամբ նաև դատարանները: Որոշ դատավորներ չեն թաքցնում իրենց վերաբերմունքն ու ԱԿ-ներին մեղադրում են ամուսնավուծությունները խթանելու համար:

Ամփոփում

Ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ներկայացուցիչների հետ հարցազրույցները, ոլորտին առնչվող իրավական փաստաթղթերի և ընթացակարգերի ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ ոլորտում առկա են բազմաթիվ ու բազմաբնույթ խնդիրներ, որոնք հրատապ կարգավորման կարիք ունեն: Մասնավորապես, թեև ԱԿ-ները գործում են պետության, այն է՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վերահսկողության տակ, սակայն պետության կողմից ստանում են ֆինանսական սուղ միջոցներ, որոնք մասամբ բավարարում են մասնագետների աշխատավարձերին: Ֆինանսական անբավարար միջոցների տրամադրման անկայունությունն ու անհամաչափությունը, տրանսպորտային, գրասենյակային և այլ ծախսերի համար նախատեսվող միջոցների բացակայությունը հավելյալ բեռ են հասարակական կազմակերպությունների համար, որոնք հաճախ ներգրավում են հավելյալ դրամաշնորհային միջոցներ կամ դիմում են «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ին՝ անխափան և արդյունավետ գործունեություն իրականացնելու նպատակով: Շատ հաճախ ցածր աշխատավարձի պատճառով մասնագետները, հատկապես սոցաշխատողները, թողնում են աշխատանքը, և այստեղ մենք ունենում ենք ռեսուրսների կորուստ, քանի որ մասնագիտական փորձը ձեռք է բերվում ոչ միայն վերապատրաստումներով, այլև տարիների աշխատանքային փորձով:

ԱԿ-ներն ունեն նաև մասնագիտական ռեսուրսի խնդիր թե՛ ֆինանսական հնարավորությունների սակավության, թե՛ մարզում առկա մասնագիտական ներուժի սղության հետ կապված: Թեև աջակցության կենտրոնների մասնագետները պարբերաբար «Կանանց աջակցման

կենտրոն» ՀԿ-ի մասնագետների կողմից վերապատրաստում են անցնում, ինչպես նաև անմիջական դեպքերի վարման շրջանակում ստանում խորհրդատվություն, այնուամենայնիվ, դեռևս կարիք են զգում մասնագիտական ռեսուրսի համալրման:

Աջակցության կենտրոններն ունեն նաև տարածքին և գրասենյակային գույքին առնչվող բազմաթիվ խնդիրներ, որոնք փորձում են լուծել տարբեր ծրագրերի միջոցով, քանի որ պետության տրամադրած միջոցները որևէ կերպ չեն ծածկում այդ ծախսերը: Բացի տարածքային ու գույքային խնդիրներից՝ ԱԿ-ներն ունեն նաև անվտանգության խնդիրներ: Կենտրոններից շատ քչերն ունեն անվտանգության համակարգեր՝ տեսախցիկներ, իսկ վտանգի դեպքում արագ ազդարարման համակարգերով ապահովված չեն ընդհանրապես:

Թե՛՛ գծի ծառայությունը հասանելի է մարզում բնակվողներին և գործում է շուրջօրյա ռեժիմով, սակայն այդ հնարավորությունը միայն ՀԿ-ների այլ ծրագրերից հատկացվող միջոցների շնորհիվ է, հեռախոսահամարները հանրայնացվում են նաև այլ ծրագրերով իրականացվող դասընթացների, միջոցառումների և արշավների միջոցով: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայքում աջակցության կենտրոնների վերաբերյալ տեղեկությունը հնացած է, ինչը արագ շտկման կարիք ունի: Այլ պետական կառույցների կողմից թե՛՛ գծերի հեռախոսահամարները ոչ միշտ են տրամադրվում շահառուներին:

Աջակցության կենտրոնների համագործակցությունը ընտանեկան բռնության արձագանքման առաջնային կառույցի՝ ոստիկանության հետ ունի բազմաթիվ խնդիրներ: Ոստիկանության կողմից դեռևս չի իրականացվում պատշաճ ուղղորդում, կամայականորեն ընտրվում են այն դեպքերը, որոնք ուղարկվում են ԱԿ-ներին, հենվելով բռնարարի ահազանգի վրա՝ հաշվառման են վերցնում կնոջը՝ որպես

երեխայի նկատմամբ բռնություն գործադրող անձի:
Ոստիկանությունը հաճախ իրականացնում է օրենքով իրեն
չվերապահված գործառույթներ, այդ թվում՝ կատարում է
հաշտեցում, բռնության ենթարկված անձանց նկատմամբ
դրսևորում է խտրական վերաբերմունք և արդարացնում է
բռնություն գործադրողներին:

Ինչ վերաբերում է պետական այլ կառույցների հետ
համագործակցությանը, ապա մասնավորապես ԽՀՄ/
ԽՀՀ ներկայացուցիչները չունեն նվազագույն գիտելիքներ
ու պատկերացումներ ընտանեկան բռնության և կանանց
ու երեխաների վրա դրա բացասական ազդեցության
վերաբերյալ, թույլ են տալիս էթիկական խախտումներ
և ամենևին պատրաստ չեն աջակցման ԱԿ-ների հետ
համագործակցության:

Խնդիրներ են վերհանվել նաև կրթական
հաստատությունների, մասնավորապես դպրոցների հետ
համագործակցության ասպարեզում: Դպրոցները, որոնք
օրենքով նախատեսված են որպես ընտանեկան բռնության
կանխարգելման բնագավառում դերակատարում ունեցող
հաստատություններ, դեռևս պատրաստ չեն աջակցման
կենտրոնների հետ համագործակցության: Դպրոցի
տնօրեններն ու ուսուցիչները չունեն բավարար գիտելիքներ
ընտանեկան բռնության դեպքերի բացահայտման և
ազդարարման վերաբերյալ, պատշաճ չեն ապահովում
բռնության հետևանքով այլ մարզից իրենց մոտ
տեղափոխված երեխաների կրթության իրավունքը, առկա
է նաև ընտանեկան բռնության վերաբերյալ մերժողական և
կարծրատիպային մոտեցում:

Քիչ չեն նաև ԱԿ-ների աշխատանքը խոչընդոտող
և բարդացնող համակարգային, օրենսդրական
և ընթացակարգային խնդիրները: ԸԲ-ն դեռևս
քրեականացված չէ, ինչի հետևանքով որոշակի
անպատժելիության մթնոլորտ է ձևավորվում բռնություն
գործադրողների շրջանում: ԸԲ կանխարգելման

օրենսդրության անկատարության հետևանքով բավարար պաշտպանություն չի տրամադրվում ընտանեկան բռնության ենթարկված անձանց, բացի այդ՝ օրենքը պարունակում է այնպիսի դրույթներ, որոնք հակասում են միջազգային իրավունքին ու բռնության ենթարկված անձանց հետ աշխատանքի համար սահմանված միջազգային չափանիշներին: ԸԲ օրենքի շրջանակում անտեսվում են նաև բռնության միջավայրում ապրող երեխաների իրավունքները, որոնք հաճախ շարունակում են ապրել բռնության միջավայրում և չեն ստանում բռնությունից տուժած անձանց համար նախատեսված աջակցություն: Նաև օրենսդրական փոփոխություններ նախաձեռնելիս հաշվի չեն առնվում բռնությունից տուժած անձանց առանձնահատուկ կարգավիճակով պայմանավորված իրավունքի իրացման համար առաջացող խոչընդոտները: Մասնավորապես «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարված լրացումների ու փոփոխությունների հետևանքով ընտանեկան բռնության ենթարկված անձ հանդիսացող հայցվորներն ազատված չեն պետական տուրքի վճարումից ամուսնալուծության, երեխայի բնակության վայրի որոշման, երեխայի հետ տեսակցության և շփման կարգ սահմանելու, երեխային ծնողին վերադարձնելու վերաբերյալ հայցերով, ինչն առաջացնում է խախտված իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու խոչընդոտներ և հանգեցնում դատարանի մատչելիության անհիմն սահմանափակումների:

Այս ամենի հետ մեկտեղ պարզ դարձավ, որ գենդերային կարծրատիպերի վնասակար ազդեցությունը դեռևս առկա է ոչ միայն հասարակության տարբեր շերտերում, այլև այն պետական կառույցներում, ինչպիսիք մարզպետարանների ԸԿԵԻՊԲ-ներն են, որոնք լիազորված են գործելու հանուն կանանց և տղամարդկանց հավասարության: ՄՄԾ-ները ևս առաջնորդվում են կարծրատիպերով և ԸԲ դեպքերի վերաբերյալ ուղղորդումներ չեն կատարում աջակցության կենտրոններ, ինչպես նաև չեն ցանկանում աջակցություն տրամադրել այն կանանց, որոնք տուժել

են ԸԲ-ի հետևանքով: ԱԿ-ների աշխատանքի նկատմամբ կարծրատիպային մոտեցում ունեն նաև դատարանները. որոշ դատավորներ չեն թաքցնում իրենց բացասական վերաբերմունքն ու աջակցության կենտրոններին մեղադրում են ամուսնալուծությունները խթանելու համար:

Այս պայմաններում, անշուշտ, շատ բարդ է իրականացնել հոգեբանորեն ծանր և ֆիզիկապես վտանգավոր այնպիսի աշխատանք, ինչպիսին ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության տրամադրումն է, և կարծում ենք, որ պետությունը պետք է հավելյալ միջոցներ ձեռնարկի ԱԿ-ներին ֆինանսական, նյութատեխնիկական, տրանսպորտային բավարար միջոցներով ապահովելու ուղղությամբ, ինչպես նաև տանի միասնական քաղաքականություն ոլորտին առնչվող պետական մարմինների և աջակցության կենտրոնների արդյունավետ համագործակցության ուղղությամբ:

Առաջարկություններ

1. Վերանայել ԱՍՀՆ-ի կայքում աջակցության կենտրոնների ցանկը, թարմացնել տեղեկատվությունը:
2. ԱՍՀՆ-ի կայքի տեսանելի հատվածում տեղադրել թեժ գծերի հեռախոսահամարները, որպեսզի հնարավոր լինի կայքի միջոցով գտնել տվյալ մարզում գործող աջակցության կենտրոնն ու ահազանգել թեժ գծի միջոցով:
3. Աջակցության կենտրոններին տրամադրել կայուն և ողջամիտ ֆինանսավորում, ինչպես նաև փոխել ֆինանսական փոխանցումների աճողական սկզբունքը:
4. Թեժ գծերի հեռախոսահամարների տարածման համար իրականացնել հատուկ ծրագրեր, արշավներ ԶԼՄ-ներում:
5. Տվյալ մարզում գործող աջակցության կենտրոնի թեժ գծի հեռախոսահամարը փակցնել ոլորտին առնչվող բոլոր պետական կառույցներում՝ տեսանելի վայրերում, որպեսզի հասանելի լինեն մարզում բնակվող բոլոր սոցիալական խմբերին:
6. Աջակցության կենտրոնների տարածքները դարձնել հնարավորն իս մատչելի հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար:
7. Աջակցության կենտրոններն ապահովել անվտանգության համակարգերով՝ միաժամանակ լուծելով անվտանգության խնդիրները:
8. Ոստիկանների հետ իրականացնել պարբերական վերապատրաստումներ ընտանեկան բռնության վերաբերյալ գիտելիքների և ընտանեկան բռնության ենթարկված անձանց հետ աշխատանքի բարելավման ուղղությամբ:
9. Ոստիկանության աշխատակիցներին խստիվ արգելել հաշտեցում իրականացնել, ինչպես նաև արգելել հորդորել կամ ստիպել ԸԲ ենթարկված անձանց՝ հետ վերցնել դիմումները:

10. ԽՀՄ-ների շրջանում իրականացնել ընտանեկան բռնության և երեխաների վրա ԸԲ ազդեցության վերաբերյալ վերապատրաստման ծրագրեր: ԽՀՀ-ները համարել մասնագետներով:
11. Գայրոցների տնօրեններին, դասղեկներին վերապատրաստել ընտանեկան բռնության ենթարկված և ԸԲ միջավայրում ապրող երեխաների կրթության իրավունքը իրացնելու, ինչպես նաև ԸԲ դեպքերի պարագայում արագ ազդարարելու վերաբերյալ:
12. ՀՀ քրեական օրենսգրքում ընտանեկան բռնության համար նախատեսել քրեական հանցակազմ, այսինքն՝ քրեականացնել ընտանեկան բռնությունը:
13. Գործուն քայլեր ձեռնարկել ԸԲ կանխարգելման օրենսդրության փոփոխության ուղղությամբ, վերանայել պաշտպանական որոշումները, որոնք ունեն ցածր արդյունավետություն:
14. ԸԲ կանխարգելման օրենսդրությունից բացառել հաշտեցման ընթացակարգը, որը խոչընդոտում է բռնություն վերապրած անձանց իրավական պաշտպանությունն ու խախտված իրավունքների վերականգնումը:
15. Աջակցության կենտրոնների հետ կնքվող պայմանագրից հանել հաշտեցման պարտավորությունը, որը նրանք չեն իրականացնում, սակայն որպես կատարման ենթակա դրույթ ամրագրված է ՀՀ ԱՍՀՆ-ի հետ կնքված պայմանագրում:
16. ԸԲ կանխարգելման օրենսդրությունում աջակցության կենտրոնների գործառնություններից հանել ընտանիքում բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիան իրականացնելու պարտականությունը:
17. ԸԲ կանխարգելման օրենսդրության մեջ որպես բռնության ենթարկված անձ դիտարկել ընտանիքում բռնությանը ականատես դարձած երեխաներին, որոնք կրում են բռնության բացասական հետևանքները, սակայն չեն ստանում որևէ աջակցություն և շարունակում են մնալ բռնարարների անմիջական ազդեցության տակ:

18. Փոփոխություն կատարել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում և ընտանեկան բռնության ենթարկված անձանց կողմից ներկայացվող՝ ամուսնալուծության, երեխայի բնակության վայրի որոշման, երեխայի հետ տեսակցության և շփման կարգ սահմանելու, ինչպես նաև երեխային ծնողին վերադարձնելու վերաբերյալ հայցերով ազատել նրանց պետական տուրքի վճարումից:
19. Իրականացնել դասընթացներ մարզպետարանների ԸԿԵԻՊԲ աշխատողների համար և գենդերային կարծրատիպերով առաջնորդվող անձանց գերծ պահել ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտից:
20. Իրականացնել դասընթացներ ՄՄԾ-ների աշխատակիցների հետ ԸԲ դեպքերի վերհանման և ուղղորդման մեխանիզմների վերաբերյալ:
21. Մշակել միասնական քաղաքականություն և արդյունավետ համագործակցության մեխանիզմներ պետական բոլոր կառույցների միջև՝ ԸԲ-ի դեմ պայքարի շրջանակում:

